

ՍԻՆԱ

ՀԱՅ ԱՄՍԱԳԻՐ

ԿՐՈՆԱԿԱՆ - ԳՐԱԿԱՆ - ԲԱՆԱՄԻՐԱԿԱՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ, ՀՐԱՄԱՆԱԿՈՒԹԻՒՆ, ԵՐՈՒՍԱԼԵՄԻ ՀԱՅ ՊԱՏՐԻԱՐքութեան,

Ն Ո Ր Ծ Ր Զ Ա Ն

Թ. ՏԱՐԻ 1935

ՏՊԱՐԱՆ ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԵԱՆՑ

ԵՐԱԿԱՆԱԿԱՆ

434 - ՅՈՒՆԻՆԱԿԱՆ ՏԱՐԻ - 1935
ԺԵ.Դ. ԴԱՐԱԿԱՐՁԻ ԱՍՏՈՎԱՇԱՌՈՒՆՉԻ ՀԱՅԵՐԸՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ

ՍԻՐԱԿ ՀԱՅ ԱՄՍԱԳԻՐ

Թ. ՏԱՐԻ - ՆՈՐ ՇՐՋԱՆ

1935 - ՍԵՊՏԵՄԲԵՐ

Թիվ 9

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՄՈՒԹԻՆ ՄԵԶԵՆ



Կարելի է ըսել թէ լրագրութեան —
և նոյն իսկ զրականութեան —
մէջ ծածկանունի կիրարկութիւնը
յաճախ հրապարակագրական պատ-
շաճութեան գործ է . երբ, զոր օ-
րինակ, դիրքի բերմամբ կամ հան-
րային զգացումը չմոլորեցնելու
զուղութեամբ, կամ ուրիշ նոյն-
քան պարզ նկատումներով, մարդ
չուզեր ինքզինքը յայտնել, զիտնա-
լով հանգերձ թէ ոճէն կամ այլ հան-
գամանքներէ պիտի մատնուի ար-
դէն իր ինքնութիւնը :

Բայց երբ ինքզինքը ծածկե-
լու ճիզը՝ պատշաճութեան սահ-
մաններէն անդրագոյն անցնելով՝
կանգ չառներ մեղապարտ ծրպ-
տումներու առջեւ, այսինքն երբ
մարդ իիդ չ'ըներ կեղծարար եւ
չարամիտ դիմակաւորմներով դա-
սակարգեր և տիտղոսներ արատա-
ւորել, պարզապէս իր վրայէն ու է
կասկած հեռացնելու մտահոգու-
թեամբ, այսպիսին բացորոշապէս անբարոյ ընթացքի կը հետեւի :

Այս վերջին ձեռնածութիւնը կընեն ահաւասիկ այն քանի մը, աւելի

ճիշդ՝ — իրենց սակաւաթիւ արբանեակները մէկդի ձգելով — այն երեք երուասպէմաբնակ անձեր, որոնք, լոկ անձնական և տխուր հաշիներով, ժամանակէ մը ի վեր կը ճնիփն զարկարեկիւ Ս. Յակոբեանց Հաստատութիւնս՝ պետական բարձրագոյն շրջանակներու և ազգին հանրային կարծիքին առջև, անստորազիր, և ինչ որ աւելի անոնելի է, «Երեք երիտասարդ զարդապետ» բոլորովին կեղծ և սուր պիտակով թուուցիկ մը լեցնելով զրպարտական տպեղ վերագրութիւներով։

Սյդպիսիներուն խօսքը, խաւարին մէջէն լսուած հայուշներ լոկ, արժանի պէտք չէ նկատուէին անշուշտ որ և է պատասխանի, ինչպէս մօրացած ճահիճներէ ցայտած կեղտեր, որոնց՝ մարդ պիտի պժգար դառնալ և քար նետել արձակուած ցեխին կողմը։ Եւ արդարի, այս էր եղած ցարդ մեր վերաբերմունքը այդ խմբակին դէմ։

Երեք տարիներէ ի վեր, այսինքն այն օրէն որ շնուռածական մեծ ձեռնարկութեանց ծրագիրը սկսաւ զործադրուիլ Հայ Երուսաղէմի մէջ, իր ամենէն լուրջ կերպը պարտքի հարցին լուժման, անոնք ըրին՝ ինչ որ կինային իրենք միայն, հրապարակը ողողեցին իրենց սուտերով։ ու մենք ոչինչ ունեցանք իրենց դէմ բայց միայն լուռթեան պատասխանը. այն ատեն միայն, այսինքն դեռ եօթնեակ մը առաջ միայն, հարկ զգալով հերքում՝ երք քանի մը թերթեր այս կամ այն կերպով կարծես ձգտեցան հովանաւորել այդ անհիմն լուրը, խորհրդածութեանց նիւթ ընելով զանոնք, եւ հետեւութիւններ եւս եզրակացնելով անոնցմէ։

Հերքումը, որ պաշտօնապէս զրկուեցաւ պատկանեալներու, հրատարակուած է Սիրոնի այս թիւին մէջ ևս։ Բայց մենք պիտի ուղեկինք յաջորդ տողերու մէջ կանգ առնել զիմանարաբար երկու կէտի առջև, որոնք մեր համարակական բարյականին վերաբերող երկու ախտաւոր երևոյթներ կը մատնանշէն։

Առաջինը՝ այն է թէ կը գտնուին մեր մէջ գեռ մարդիկ, որոնք գուենիկ և զծուծ կիրքերէ կրնան ինքնինքնին արտօնուած զգալ բռունցք բարձրացնելու ազգային Հաստատութեան մը ուղոյն դէմ նոյն խսկ, խորհելով թէ այդ կերպով մահացուցիչ հարուած մը պիտի տուած ըլլան անոր համբաւին և պատույն դէմ։ Հաստատութիւնը՝ ներկայ պարզազին մէջ՝ միարանութիւն մըն է, հոգեր սկզբունքներու վրայ հիմնուած Մարմին մը, որուն բարյականին ամենէն մեծարժէք կողմերէն մին՝ իրեն համար՝ իր անուան և կոչումին արդարացումը պիտի ըլլար՝ իր կեանքին և գործունէութեան մէջ։ Անիկա, այդ միարանութիւնը, իր բոլոր անդամներով մէկտեղ, արքներէ ի վեր, խորհուրդի, խօսքի և գործի միանականութեամբ կ'ընէ ահա իր բովանդակ կարեկին՝ Աստուծոյ փառքին և ազգին պատուին համար անմահ նախնիքներէ կանզուած և օրէնքի ու աւանդութեանց ճամբով իրեն փոխանցուած դարաւոր եւ նուիրական այս ծովովուրդին զգուանքին և օտարաց յարգանքին առջև։

Ասոր համար, այդ Միարանութեան համար, կ'ըսենք, անցեալին զգացումէն եւ ապազային մտածումէն իր խղճին վրայ հարկադրուած այդ իդը իրա-

կանացնելու մեծազոյն պայմաններէն մին է համերաշխութեան, սիրտերու եւ միտքերու ներդաշնակութեան հոգին, որ զերտկատար ոյժն է արդարէ բարոյական իրականութեան մէջ :

Անոր, կը կրկնենք, այդ Միաբանութեան համոզումն է թէ իրեն և թէ իր պաշտած իտէալին, այսինքն այս Հաստատութեան ազգանուեր ողւոյն, մեծ թշնամիները պիտի լինէին անոնք իր մէջէն, իր անդամներէն, որոնք պիտի ուղէին փորձուիլ խանգարելու անոր ներքին կեանքին խաղաղութիւնը, իսկ աւելի մեծազոյները՝ անոնք, որոնք, ողորմութեամբն Աստուծոյ ներքին համերաշխութիւնը վրոգվող այդպիսի վիճակ մը չեղած պարագային, ինչպէս է այժմ, չար և խեռ զգացումներէ մղուած, կ'ուղեն բոլորովին հակառակ հաւատցնել հանրային զգացումին :

Իսկ մեզի համար աւելի ցաւազին եղաւ մտածել թէ կը գտնուին նաեւ Հայ Մամուլին պատկանող թէրթէր, որոնք ոչ միայն լայն կը բանան իրենց դուռները՝ անձանաշ և անձանուն գրիչներու, ինչպէս իրենց ծինիներու վրայ թուլցած փեղկեր՝ զորս կրնայ շարժել որ և է կողմէ վշած քամիի շունչ մը, այլ նաև թռուցիկի մը ճայրու պատրոյդէն թափած արօտ լոյփն տակ տեսութիւններ ճախարակել՝ պատճառներու և արդինքներու հետախուզութեամբ . . . :

Ի՞նչ ալ անդորր սրտով կը փութաք հաւատք ընծայել «Երիտասարդ գարդապետներու» վրայ նետուած անուղիղ ընթացքի մը . այդպէ՞ս պէտք էր պատուել արդեօք զաղափարը կրթուած նողնորականութեան, զոր իրաւամբ թելադրած է ձեզի անշուշտ լոկ Երիտասարդ կրօնաւորի այդ որակումը : Աւելի արդար պիտի չըլլա՞ր միթէ պզտիկ քննութեան մը ենթարկել նախ հարցը, ինչպէս ըրած էին ուրիշ թերթեր, և յետոյ ըստ այնմ զբաղիլ անով :

Երեք տարիներէ ի վեր մեր գէմ յարակինուած այդ զրպարտագիրներէն ոչ մէկ չափով ազգուած էինք որ և է ատեն . վասնզի տարբեր բան մը չէինք կրնար սպասել անոնց հեղինակներէն . բայց, ներուի մեզի ըսել թէ քանի մը թերթերու այդ կեցուածքը վիրաւորիշ կը գտնենք պարզապէս, և իրաւունք կը զգանք մեզի՝ արտայայտուելու այս չափ մը գէթ, և այն՝ ի պատիւ այն ըմբռնումին, զոր ունինք Մամլոյ առաջնորդող և գաստիարակիչ դերին նկատմամբ :

Ինչպէս ամէն փոքր ի շատէ բազմանդամ ընտանիքի կամ ստուարակազմ ընկերակցութեան, նոյնպէս եւ այսպիսի մեծ եւ հինաւուրց Հաստատութեան մը մէջ, եղած են եւ են անշուշտ, այժմ մանաւանդ՝ երբ մտածումի կեանքը աւելի մշակուած է հոն քան երբեք, տեսակէտներու տարբերութիւն և կեանքը մշակուած է հոն քան լինին նոյն իսկ, ներքին կեանտարակարծութիւններ նոյն իսկ, որոնք պէտք է լինին նոյն իսկ, ներքին կեանտարակարծութիւններ լացումի զերծ պահելու համար, բայց ոչ ծածկուած ցաւերքի մթնոլորտը լացումի զերծ պահելու համար, բայց ոչ ծածկուած ցաւերքի կամ խորունկցած վէրքեր, ինչպէս Լիբանանեան հայ թերթի մը երուսաղէմի թղթակիցը փափաքած էր որ եղած լինին անպատճառ: Հոս, ամենամեծ մասմբ, աշխատութեան և ուսկը միա անկեղծ արամագրութիւններ միայն կան. ողին՝ որ կ'ապրի հոս և կ'ապրեցնէ ամենուն մէջ մտքի եւ սրտի կեանքը, հառողին՝ որ կ'ապրի հոս և կ'ապրեցնէ ամենուն մէջ մտքի եւ սրտի կեանքը, հառողին՝ որ կ'ապրի հոս և կ'ապրեցնէ ամենուն մէջ մտքի եւ սրտի կեանքը, հառողին՝ որ կ'ապրի հոս և կ'ապրեցնէ ամենուն մէջ մտքի եւ սրտի կեանքը, հառողին՝ որ կ'ապրի հոս և կ'ապրեցնէ ամենուն մէջ մտքի եւ սրտի կեանքը:

Ներսը սկզբնաւորուած սայթաքումներ, ու դուրսէն մանաւանդ սողոսկած չար ազդեցութիւններ:

Երկրորդ կէտը, որուն քանի մը բառով միայն պիտի ուղէինք ակնարկել, անպատճապար զրպարտութեան այն յամառ եւ յիմար ողին է, որ ա՛լ արուեստ գարձեր է կարծես այդ թնճկուած մտքերուն համար: Այս մարդիկը ի՞նչպէս կը ծածկեն ստուգութիւնները, ու ինչպէս կը փոեն կը տարածեն ինչ որ սուտ է և խաբէութիւն: Խրենցինին նման ուղեղներ միայն կրնային ըմբռնել ատիկա:

Վերջին միայն երեք տարուան մէջ 54000 ոսկւոյ արժողութեամբ շէնք շնուռեր է մեր զետիններուն վրայ, առանց նոր պարտք ընելու, (առանց և որ իսկ հնախօսական և արուեստագիտական արժէք ներկայացնող իրեք ծախելու մեր գանձարանէն, ինչ որ պիտի կարենայինք՝ եթէ պէտք զզայինք եւ պարզաները նպաստաւոր լինէին), ու օգտագործելով միայն Պաղեստինի ներկայ տնտեսական վերելքը, որ մեզի պատեհութիւն տուաւ հարուստ զիներով ի վաճառ հանելու մեզի համար նուազ արժէք ներկայացնող ցիրուցան եւ մանր գետիններ: Մենք անոնց արժէքներէն դրացած զումարին վրայ աւելցնելով այն ևս՝ զոր Հանրային օգաֆ Պետական Վարչութիւնը վճարած էր ի զին մեր զետիններէն զրաւուած մասերուն՝ Երուսաղէմի մէջ եւ ի Յոպաէ, միայարկ եւ բազմայարկ շէնքերով շուկաներ կազմած ենք քաղաքին ամենէն՝ յարզի մարդին մէջ, Ս. Աթոռոյս պատկանեալ «Մենծ արտ» կոչուած հողին վրայ: Զենանելով այս ամէնը, որուն պատճառաւ մեր ելմոտական վարկը այնքան բարձր է այժմ Պաղեստինի մէջ, եւ որուն համար ինչակցութեան եւ զոհունակութեան խօսքեր միայն լսած ենք կառավարական և օտար շրջանակներէ, կեղծարար և կամաւոր կուրութեամբ չտեսնելով իրենց աչքին ատցէ բարձրականզուն այդ փաստերը, այդ եղկելինները իրենց խլրդային տեսողութիւնը կ'ուղեն միել մեր տոմարներէն ներս, եղկերուաքաղային սուտեր դարձնելու համար հոն ալ, Այսպէս, իրենց կարծիքով, մենք ոչ միայն շենք նուազեցուցած պարտքերնիս, այլ ընդհակառակն աւելցուցեր ենք զայն: մինչ սումարական արձանազրութիւնք և արդարացուցիչ վաւերազգիններ կ'աղաղակին թէ 100000ը, որ Պաշտօնական Հերքումը Ծնորէն ժողովէն ստորագրուած օրը 93000ի էր իջած, այժմ, մէկ շարթուան մէջ մօտեցած է արդէն նոյն իւլ 92000ի:

Պարուց նուազեցման այս գործը, ինչպէս դիւրութեամբ պիտի ըմբռնէին հարցին մասնազիտական հասկցողութիւնը ունեցող անձննք, տարուոյ որոշ մէկ քանի շրջաններուն, կրնայ եկէջի փոքր շարժումներ ունենալ դեռ, բայց տնօրինուած է որ յառաջիկայ Մայիսին ան պիտի զտած ըլլայ 90000ը, յաջորդ տարեշրջանին արագ թափով շարունակելու համար իր էջքը, եթէ, ողորմութեամբն Աստուծոյ, արտակարգ և համայնական դիպուածներ շխանգարեն ընդհանուր վիճակը:

Բառ մը ևս, և կը փափաքինք միանդամ ընդ միշտ վերջացնել մեր խօսքը այս ապիցիատ հարցին մասին: Այսօր (Օգոստ. 17), մինչ Սլոնի Սեպտեմբերի թիւին համար կը զրուին այս տողերը, Յոպաէէն հեռաձայնով կը հա-

զորդուի Պատրիարքարան, թէ զրպարտիչներու նոյն խմբակը Բարձր Գոմիսէրին ուղղուած նոր թուոցիկի մը պատճենը զրկած է տեղւոյն թերթին, Պաղեստինի արքարքէն մեծազոյն թերթին, որ, ինչպէս երկրորդ անգամին, նոյն պէս և այս անգամ, զղուանքով մերժած է անոր հրատարակութիւնը, զայն անմիջապէս հասցնելով միայն Յոպակէի մեր վանքի Տեսչին ձեռքը: Անոր մէջ այս անզամ սուտի վիթխարի զիւտ մըն է որ կը յերիւրուի: Իրը թէ ամսոյս իննին մեր ելեմտից տոմարին մէջ արձանագրուած ըլլայ լ. Պ. 20.638 ծախք մը, որ սակայն, կ'ըսէ, իրականին մէջ լ. Պ. 2.638 է միայն. ու կը հետեւնէ թէ երկու գումարներուն տարբերութիւնը բաժնուած է քանի մը յափշտակիչներու միջև, որոնցմէ այնքան շատ կան եղեր այս նուիրական յարկին ներքեւ . . .

Պէտք իսկ չենք տեմսեր զգացնելու թէ Բ'նչ ախտաժէտ երկակայութեան ծնունդ են այս ամէնը:

Վաստան ենք թէ ողջամիտ ընթերցողը, տեղեկանալով այս քանի մը մանրամասնութեանց, պիտի շուտով խելամուտ լինի թէ Բ'նչպիի նկարագրով մարդոց հետ է մեր զործը. մութին մէջէն դաւոզ մարդերու, որոնք չեն համարձակիր խաւարէն, որ իրենց հողիին միակ մթնոլորտն է, դուրս զալ, զախնալով որ մի միայն իրենց անունն ու ինքնութիւնը բաւական պիտի ըլլան հրապարականախատ նշանակումի առարկայ ընելու իրենց անձն ու զործը. և որոնց պիտի չզիջանէինք տող մը նոյն իսկ պատասխան զրել, եթէ հարցը դառնար անձի կամ անձերու շուրջ, և ոչ թէ դարաւոր և նուիրական Հաստատութեան մը՝ որուն վերաբերմամբ չենք կընար ուղել անշուշտ որ պատրուի ժողովուրդին բարի միամտութիւնը:

* * *

ՀԱԽԱՑՔԻ ԵՒ ՄԹԱՆՌՈՒՄԻ ՑՈՒՎԵՐ

ԿՐՈՆԱԿԱՆ ԲՆԱԳԴԻ

Սկսեալ տիմար վայրենէին՝ որ հոդը կը պատի զգաւեկի կուռքի մը ուշբին առջև, մինչև Արևելքի մոգքը, որ արևին մէջ ընութեան անման հոգին և ամէն դոյսութեան սկիզբը կը պաշտէ. սկսեալ նախնական ժողովութիւններէն՝ որոնք Արարեւիկի կ'ընծայէն իրենց հռնձեցուան երախայրիքը, մինչև չարաբասակի այս ժողովութեղները, որոնք Կ'երևակայեն մեծարանք մատուցանել անոր՝ ամօթալի լկուութիւններով, կրօնական բնալզը ամէն տեղ և ամենուա մէջ ինքնինքը կը նաեւցնէ: Մարդը չի կընար հրաժարիլ ոչ իր մնացերէն և ոչ Աստուծելի, իր ապականութիւնը այս ախարէի հետ կը կապէ զայն. իսկ որոճքաւոր բնազը մը կը խորացնէ զայն զէպի անսեսանելի աշխարհը: Այս երկու ներկակ զօրութիւններուն մէջ ընտրութիւն մը չ'ըներ ան, երկու անհամբարձի տարբերը կը ստիպէ հաստուի իրարու հետ. իր պաշտամունքին կը խառնէ իր բարոյականը, աստատաները իրեն համար իրեն նման աստածներ կը չին ու որպէսի հարենայ անոնց մնայքի իր յուրա հակումներուն հանգուանակ պատամունք մը, իր մոլութիւններն իսկ իրեւ. աստուածութիւն գը կանչէ. իր կրօնքը հաւատարիմ հայելին կըլլայ իր բնական ապականութեան. մէկ բառով, կը նուաստացնէ Աստուածութեան զալափարը, ըլլայ չի կընար զանց ընել զայն, ու կը սիրէ աւելի վայրագ աստուածութիւններ ունենալ, քան բան մը չպաշտել:

Ա. Ա.,

ԿՐՈՆԱԿԱՆ

ՑԻՍՈՒՄԻՄ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

ԸՆՍ ՀԱՄԱՏԵՍԱԿԱՆՆԵՐՈՒՆ

Դ. ԳԼՈՒԽ

ԹԱԳԱԽՈՐՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԸ. ՑԻՍՈՒՄԻՄ ՀԵՏԵՒԹԵ

(Նոր. Սին 1935, էջ 213 էջ)

Հարց եղած է այս առթիւ թէ ի՞նչ է երկնային հոգիներուն դիրքը Աստուծոյ թագաւորութեան մէջ: Տարակոյոց չկայ թէ, ըստ համատեսական ուսուցումին, անոնք զործօն ծառայութիւն մը կը կատարեն Վեհակացոյն թագաւորին տանը մէջ: Անոնք ոչ միայն կը շահագրգոռուին փրկութեամբ (Ղուկ. ժե. 7, 10), այլ և շփման մէջ կը մատեն երկրի վրայ Աստուծոյ ծառայողներէն ամենէն աննշաններուն եւ ամենէն մեծերուն հետ (Մտթ. ժե. 10, իշ. 53): Իրենց զուարթամիտ հնազանդութեամբը անոնք մշտական օրինակ են աշակերտներուն (Մտթ. Զ. 10). վերջին օրը, Քրիստոս զատաստանի կատարման զործը պիտի յանձնէ անոնց (Մտթ. ժ. 39, 41, 49, ժ. 27, իշ. 31, իշ. 31): Սյուս հանդերձ, ինչ որ ալ լինին այս հոգեղին չանիներուն իրաւունքները, եթէ թագաւորութիւնը այս աշխարհիս վրայ այն գործարանարութիւնն է որ կազմուած է Յիսուս Քրիստոսի գործունէութեամբը, հրեշտակները, իսկապէս պիտի չկարենային անոր անդամներն ըլլալ: Անոնք կը պահպանեն զայն, կ'աշակեցին անոր, բայց իրենք չէ որ կը կազմեն զայն: Աւետարանը եթէ աստուածային չնորհաց պատգամն է մի միայն մարդոց ուղղուած, ուրեմն ի՞նչպէս ըմբռնուած է մարդկային ըլլնութիւնը Աստուծմէ: Այս նիւթին նկատառման մէջ, մեր քննութեան առարկայ պէտք է ընենք նախ սա կէտը թէ ի՞նչ է բընական մարդը, ըստ Յիսուսի. յետոյ թէ ի՞նչ կերպարանափոխութիւն պէտք է կը ան թագաւորութեան մէջ մուծուելու համար:

Ա. ՄԱՐԴԻՈՒՆ ԲՆՈՒԿԱՆ ՎՀԱՃԱԿԸ

Որովհետեւ մարդ էակը կրնայ ըմբռնուիլ թէ՛ իր հոգեկան կազմութեան (մարդագանութիւն), և թէ՛ իր բարոյական վիճակին մէջ (մողքին վարդապետութիւնը), այս ինդիրը ինքն ալ ուրիշ երկու խենագիւներ կը պարունակէ իր մէջ.

Ա. Մարդարանուրիւն. — Այս մարզին մէջ, համատեսականները նոր բան չեն սորվեցներ. անոնք կը բաւականանան վիճարտագրելով միայն երբայական հիմ տեսակէտը, ճշշէ ինչպէս ցուցագրութեած է անկայ Մննդ. Բ. Դին մէջ, որ հետեւեալ կերպով կը ներկայացնէ մեր բնութիւնը: ա) նախ, սուոյ յերկրէ» է ան. ինչ որ ըսել է թէ Սրբազն հեղինակը մարզուն բոլորպին նիւթական սկիզբ մը կուտայ, զիմարաժանորէն զուա հոգիներուն, որոնք հրեշտակներն են (πνεύματα, Երր. Ա. 14): Այս գդալի տարրը միան է, որ մարմինին մէջ անհատականալով, կ'ընդունի իր գործարանական ձեւ:

Բ) Այսու հանգերձ միսու ինքնիրմէ չի ստանար իր շարժումը. ուստի Ս. Գիրքը կ'աւելցնէ շուռնչ կինդանին, Աստուծմէ ելած հոգի, որ կը կենդանազործէ անգործ զահկուածը: Երբ հոգին անկէ ետ անըւի, մարզը կը մեռնի (Մտթ. իշ. 50, Ղուկ. իկ. 46), Երբ արարիչը նորէն զրիէ զայն, մարդ վերախին գոյութեան կը գտնայ (Ղուկ. Ղ. 55): Աստուծածային սկիզբ մըւլով, հոգին, Աստուծոյ պէս, կը խռատի զայարանական ըմբռնուածէն: ոչ ոք չի կրնար հայի անոր, ոչ ալ տեսնել զայն (Ղուկ. իշ. 39): Ուստի յայդ անունով կը յարջորդուին նաև բոլոր անմարմին հակները, հրեշտակ կամ ողի (Երր. Ա. 14, Ղուկ. իշ. 37), նոյն իսկ զեերը, որոնք այնքան յիշատակուած են Ս. Գրոց մէջ (Մարկ. թ. 17, 25 ևայլի):

Գ) Միւս կողմէ, նիւթին ու հոգին մրայն իրարու քով առընթերազրուած չեն. զի մարդը, ընդհակառակը, կըսէ Ս. Գիրքը, իր միութեանը մէջ է սուոյ կինդանի, կինդանի էակու: Ծլմարիտ է թէ հոգին, մարմինին զիմարաժանաբարը, կը նշանակէ մարդուն հոգեղին տարրը (Մտթ. ժ. 28): Երբ հոգին հետանայ, մարմինը

կը կորսաւի. իսկ երբ վերադառնայ՝ նորէն կեանք կ'առնու (Պրծ. թ. 10): Բայց, մարդ որչով ալ շտա կարեւորութիւն չի տայ յաճախ անտեսանելիին, այս անշաշափելի սկիբը գարձեալ կը մնայ էտկան ատար (Մտթ. ժ. 26), ու այս բատին սու դորական իմաստով՝ հոգի ըսելով կը հասկցուի մարդկային հոյ, իր ոյժունն մրութեանը մէջ լըմբանուած: Եթբ Յիսուս կ'ըսէ, զոր օրինակ, թէ ով որ պիր հոգին պահէ, պիտի կորսնցնէ զայն, իրեն-ներէն կը պահանջէ նուիրումը ամբողջնն եւ ոչ թէ միայն մէկ մասին. կամ երբ կը հաստատէ թէ սիր նոգին» պիտի տոյ շատերուն համար, այդ զոհը ամբողջ հոյն դոհն է, այսինքն կենդանի անձին ամբողջութիւնը:

Երբեմն մարգս, այսպէս լըմբանուած, մարմինովը երկրին է փարած, իսկ հոգիովը՝ Աստուծոյ. ասոր համար է որ այս բառերուն հոգեբանական գաղափարին վերայ կ'աւելինայ կրօնական առում մը: Իրարեւ երկրաւոր էակ, անտեսանելիին կը տենչայ (Ղուկ. Ա. 47, 80, ժ. 21): Հոգին գործ, ըստ հաստատուած իմաստին, անիկա կեզդրնն ու վաստարանն է զմեկ յուղով բարի կամ չար չարիքներուն, անո՞ր է, զոր օրինակ, որ կը փերագրուին ուրագութեան կամ արտասութեան (Ղուկ. Ա. 46, Մտթ. ի. 2, Ղուկ. թ. 35), սիրոյ կամ ատելութեան (Մտթ. ի. 37, Պործ. ժ. 2), գոհունակութեան եւ անհանգստութեան (Մտթ. ժ. 29, Ղուկ. ժ. 19) զգացաւմները: Միիան, — պէտք է նկատել — աննպաստ առումը աւելի ուժեղ չէ հոս, ինչպէս է զոր օրինակ Պօղոսի թուղթերուն մէջ: Վսչին եւ ուռնմափ միջև հակագործիւնը ընդհանրապէս օտար է համատեսականներուն, որոնց համեմատ հոգին, կրնայ ըլլալ, ինչպէս միտքը, աթոռ այս մղութերուն, որոնք առ Աստուծած կ'երթան. այս կէտին պիտի վերադառնանք տակաւին (Ղուկ. Ա. 46 (Վշչ) հմտ. Հ. 47 (ՊԵԿԱ). տեսնել նաև Մտթ. թ. 8, Ղուկ. թ. 15):

Բ. Ուրեմն մարդ ի՞նչպէս կիրարկած է իր այս ոյժերը: Այս հարցումը զմեկ կը տանի մեղքին մասին Աւետարաններու ըրած ուսուցումին. կարդ մը համատեսա-

կան հատուածներ կը թօւին չընդունիլ մարդուն տիեզերական անկումը. շատ անգոմներ ինդիբ եղած է անսնց մէջ՝ արդարներու և անարդարներու, բարիներու և չարերու մասին (Մտթ. թ. 45, Թ. 13, Ղուկ. ժ. 7): Ուրիշ հատուածներ կը ցուցնեն, սակայն, թէ Ծիստս մարդկութիւնը իր ընդհանրութեանը մէջ որս եղած կը ցուցնէ մեղքին, առանց բացառութիւնը նոյն իսկ անսնց մասին, որոնք ամենէն աւելի կը պատուեն զինքը իրենց վարքովն ու բարքովը: Ի ներկայութեան հաւանաբար շատ պարկեց իսրայէլացին մը, զոր օրինակ, որ կը յայտարած թէ իր մանկութենէն ի գեր գործադրած է օրէնքը, պարզօրէն կ'ըսէ թէ զիթք ոք բարի, բայց միայն Աստուծած: Ուստի և իր աշակերտներէն կը պահանջէ որ ներում ինզրեն իրենց գործած յանցքներուն համար (Մտթ. Զ. 12), ինչ որ կ'երեւ թէ կը ցուցնէ որ անհաները, թագաւորութեան թշնամիները, մեղաւորներ են (Ղուկ. ժ. 1-5): Յիսուս այս իրազութիւնը կը բացարէ, յայտնելով թէ «սիրար», բարոյական կեանքի այս կեդրանը, որմէ կուգան խորհուրդներն ու զործերը, պղտոր պղրիբը մը պէս է (Մտթ. թ. 11, ժ. 19): Ու իր համարտակութիւնը, ազգաը (Մտթ. ժ. 39, ժ. 2): Այդպէս զատկէն զգգոնչ չհատացանդղ պարտապան մը կը կոչէ մարզը ընդհանրապէս, փարախէն զուրու մոլորած ոչխար մը (Ղուկ. ժ. 3), անուակ որդի մը, որ ոտար երկրի կ'երթայ, ամօթայի կերպով մախիլու համար իր ժառանգութիւնը: Հետամարտ, առանց բացառութեան ամենուն է որ կ'աւզդուի, փրկութեան պատզամուգը, ապաշխարութեան խստագատ քարոզութիւնը (Մտթ. թ. 17): առանց արմատական կերպարանափոխութեան մը՝ ոչ պիտի կարենար մտնել երկնքի թագաւորութեան մէջ (Մտթ. ժ. 3, Ղուկ. ժ. 27, 27):

Բայց եթէ այդ պէտք է, ի՞նչ կ'ըւլան գրաբիներու և պշարերու աւետարանական ըմբռնումները: Դիւրին է զանոնք հասկալ զին Կտակարանի համեմատ, կամ իրեր ժողովրդական լիզուէն փոխ առանուած արտայայտութիւններ: Բայց մեղքին տիեզերականութիւնը իր ամենէն

դասական իմաստովը հասկցող աստուած ծարանն անզամ չի կրնար կարգ մը տարբերութիւններ չընդունիլ մարդոց միջեւ։ Որութեաւ ամբողջ մարդկութիւնն է որ ինկած է, ամանք արդարն կը շանան զուռելլի այդ վիճակին (Ղուկ. Ը. 15), մինչդեռ ուրիշներ անձնատուր կ'ըլլան իրենց յոսի բնութեան հակումներուն։ Երբ ուրեմն չարերը բարիներէն կը զատորչէ, ինչպէս լերան քարոզին մէջ (Մաթ. Ե. 45), Յիսուս ըսել չուզեր ընաւ թէ կարգ մը մարդկի փրկութեան պէտք չունին. ոչ. ամէնքը անմաքուր են Աստուածոյ առջև։ ամէնքը պէտք ունին փրկուելու։ Երբայեցի մարգարէները արդէն չե՞ն յիշեր ռարդարներ և «անարդարներ», թէն Մովսէսի օրէնքը առանց բացառութեան բոլոր իսրայէլացիներուն կը պարտազրէ պասն մեղաց զոհւ։ Այսպէս կը բացառուին, զոր օրինակ, այն առերեւոյթ հակասութիւնները, զոր օրինակ Սաղմոսի ժ՛թ։ գըլուխի այն հակասութիւնը, ուր հեղինակը, ծրդ համարութիւնն մէջ, կը հոչակէ Տէրովը ներկայութիւնը «յանազաք արգարցոց, մինչզեռ երկու համար առաջ ըսած էր թէ Տէրը ույրէնին յանեցաւ յամենայն որդիս մարդկան, տեսանել թէ իցէ՞ ոք իմաստուն որ խնզրիցէ զկստուած», բայց ամէնէնքեան խոտորեցան, ի միասին անպիտանացան։ ոչ ոք է որ առնէ զբարի և չէ ոք մինչև ի մի» (Հ. 2, 3). Ինչ ըստել է այս սա՝ անշուշառ թէ ժողովուրդը իր ամբողջութեանը մէջ հեռացած ըլլալով Տէրովմէ, արդարները անսնք են որ, այս տիեզերական ապականութեան մէջ, կը տենչան վերականգնումի, զանզի ամենէն աղէկ կը զգան իրենց յանցանքը։

Իրաւ է թէ Յիսուսի ատեն մարդիկ կային, որոնք ինքզինքնին արդար կը կարծէին, բասան ամենէն խիստ առումովը, մարդիկ՝ որոնք ճակատարց պիտի ուղէին ներկայանան աստուածային սրբութեան դատարանի տուժն։ Բայց ինչ հեղութեամբ է որ Աւետարանը կը մատնանցէ այդ կարծեցեալ կատարելութիւնը (Մաթ. Թ. 18, Ղուկ. Ժ. 7): Խնչպէս Տէրը կ'ըսէ, այդ արդարները ուրիշները արհամարհելով ինքզինքնին պանծացներէ զատ ուրիշ արժանիք չունէին (Ղուկ. Ժ. 9). կարդացէք Փրկչին ամենէն նշանակա-

լից ուստուցումները, հասկնալու համար թէ որ աստիճան կարեսրութիւն կ'ընծայէր անիկա այդ բարձրամիտ առաջինութեան (Ղուկ. Ժ. 10-14): օԱսեմ ձեզ, կ'ըսէ անիկու լերան քարոզին մէջ, եթէ ոչ առաւելուցու արդարութիւնն ձեր առաւել քաղաքացն և զիարիսկեցոց, ոչ մտանիցէք յարբայութիւն երկնից (Մաթ. Ե. 20): Արդ, քանի որ մտքաւորները, և անոնք որ ամենէն աւելի մեղաւոր կը կոչուէին (Մաթ. Թ. 10, 13 ևայլն) աւելի առաջ պիտի անցնին երկնից արքայութեան մէջ (Մաթ. Ի. 31) քան զիգիներն ու փարիսեցները, կը հասկցուի թէ այս սուստ արդարները ո՞շափ պիտի կործանին իրենց ամբարտաւանութեանը մէջ, Աստուածոյ ճշշմարիտ ծառաներն ըլլալ կարենալու համար։ Տէրովը մտածումը պարզ է ուրիշն։ բոլոր մարդիկ մեղաւորներ են, ամէնքը պէտք ունին թողութեան (Մաթ. Զ. 12). լաւազյնները այն հոգուվ աղքատներն են, որոնք իրենց անարժանութեան զգացումն մէջ «քաղցեալ և ծարաւի են արդարացնեան» (Մաթ. Ե. 3, 6), — Կ'աւելցնիմ թէ, Յիսուսի միտքը հասկնալու համար, պէտք է ի նկատի ունենալ նահել իր վարդապետութեան ժողովդական ձերը, որ Պօղոսի տրամասացական մեթասով չէ որ կ'ընդլայնուի։ համատեսականները — պէտք չէ մոռնալ — տարրական ճառեր միայն կուտան, յօյժ անզէն հասարակութեան մը ուղղուած ըլլալով։ Բայց բաւուկան էր որ մօտէն քննէք զանոնք. իրենց մէջ պիտի գտնէք գանձեր, զորս յետոյ առաքելական քարզութիւնը այնքան պայծառ կերպով երեան հանեց։

Բայց եթէ Յիսուս կ'ուսուցանէ մեղքին տիեզերականութիւնը, կը ցուցնէ՞ անոր ծագումն աւ Աւետարանները այդ առելի կը խօսին զոյութեանը վրայ էակի մը, որուն նիզն է խոտորեցնել ուղղութեան ճամբէն՝ Ազամի որդիները, և որուն տրուած են անուններ, որոնք շատ յստակ կերպով կը ներկայացնեն անոր նըլկարագիրը։ անիկա կը կոչուի, զօր օրինակ, զրպարտէլ, սոսին, Բէկզզերուզ, իշխան զիւսի։ Աստուածոյ այդ թշնամին իր ձեռքին տակ ունի զօրեզ կագմակիրպութեամբ թագաւորութիւն մը (Մաթ. Ժ. 26), պիզ ովհները անոր հնագանդ գորու-

ծիքներն են. ասոր համար է որ Յիսուս իր աշակերտներուն կատարած դիւճաւանութիւնները կը նկատէ սատանին փրայ տարաւած յաղթանակ մը (Ղուկ. Թ. 8). Կորիին տունը մտնելու և անոր ունեցած ները յափշտակելու համար՝ ոչ ապաքին պէտք է կատակ զայն (Մաթ. Ժ. 29): Բայց թէ Քրիստոս ինքն անձամբ յաշթահարեց խաւարին իշխանութեան այս միտակեար, բայց սատանը գարձեալ, իր բնութեամբն իսկ, տէրն ու բռնաւորը կը մնայ մարգկութեան (Ղուկ. Դ. 6): Սատանաւածքի սէրը, այս զգուեկի միտակ, պատճառ կ'ըլլայ ամենէն աւելի երեան բերելու անոր չարանինդ օգին (Մաթ. Ժ. 28). Ինչ ինչ մարմնական հիւանդութիւններ անոր կը վիրազգուին (Ղուկ. Ժ. 16), բարոյական անկումներուն մէջ է մտնաւանդ որ կը յաղթանակէ այս տիխոդ էակը: Ինքն է որ, Յուղան անձիր մղելով, միւս ոչակերտները ցորենի պէս կը խարբայէ (Ղուկ. Բ. 3, 31): Զյանդգնեցա՞ւ յարձակի նոյն իսկ Աստուծոյ Որդիին վրայ (Մաթ. Դ. 1-11), և, իր նենգամութեանը մէջ, ի հարկին, սիրուած անձի մը կերպարանքը չ'անոնը միթէ, իր զոհերը մեղքին մէջ քաշելու համար (Մրկ. Լ. 33):

Միւս կողմէ, սակայն, Սատանը այն ատեն մրայն իր ազգեցութեան տակ կը ընայ առնել մարդկըր, երեւ արտաքին փրձութիւնը կը համապատասխանէ ներքին ցանկութեան մը. վասնզի, սիրակ'ն է որ, ըստ է Յիսուս, գուրս կուզան սպասութիւնները, չութիւնները և յոթ մտածութիւնները (Մաթ. Ժ. 19), և այնպէս է մեր բնածին չարատեսութիւնը՝ որ նոյն իսկ Քրիստոսի օրնեալ զործունէութիւնը երկիր վրայ մեղքի առիթ մը կ'ըլլայ մեղք համար (Մաթ. Թ. 6): Վայ սակայն անոնց որ, զիսնալով և ուզելով թէ այդպէս է արդարեւ, կը գայթակղեցնեն իրենց եղբայրները (Մաթ. Ժ. 7): Այսպիսի անկումներ, անշուշտ բնական են. մեր բոլոր յոթ մրտութերը տառը կը մղին զմեզ. բայց, այնու ամենայնիւ, զերչին օրը Քըրիստոս իր թագաւորութիւնէն պիտի մերժէ զանոնք որ անիրաւութիւն կը գործէն (Մաթ. Ժ. 41):

Այսպէս իրերւ թշնամիէն լարուած ծուզակ մը ցուցնելով մեղքը, Յիսուս ա-

նոր արտաքին նկարագիրն է որ կը յայտնէ. զանիկս կը ներկայացնէ ոչ թէ իրեւ թաքուն տրամադրութիւն մը, այլ իրեւ շօշափելի իրականութիւն մը, որուն կ'ընդհարինք մենք ամէն քայլափոխի: Ուրիշ կողմով մը, զինքը զործողին հետ իր յարաբերութիւն մէջ նկատուած ատեն, մեղքը կը կ'առնեալ այնպիսի անուններ, որոնք կը ցուցնեն անոր որչափ վտանգաւոր եւ յիմարական լինելը: Անիկան ձմարտէ, ձմքարտութիւնը է (Մաթ. Թ. 2, Մրկ. Գ. 28), այսինքն ամուրանքու կամ աննպատակ շնորհ ուղիղ ճանապարհէ (*). Այսանցանքը (ուսումնական) (բառական, Մաթ. Է. 23, Ժ. 41): Ուստի ասոր հետեւանքը կ'ըլլան կորուստ և մահ (Ղուկ. Ժ. 24, 32). վասնզի, եթէ Յաւիտինականին դառնալը կենաք է, անկէց հետանալը մահ միայն կրնայ պատճառեկ: Այսպէս լիներով բնական մարդը, ամբողջական փոփոխութիւն մը հարկաւոր կ'ըլլայ անոր համար որ կ'ուզէ ուրդի արքայութեան ըլլալ: Անթէ ոչ զարձիչք և եղիջիք իրեւ զմանկըտի, ոչ մտանիցէք յարքայութիւն երկնից:

(Շարունակելի)

Ժ.

(*) Մեր թարգմանութեան մէջ այս երեր տեղին ալ «մեղք» է նշանակուած:



ԽՈՐՃՈՒՐԳ ԵՒ ԽՈՍՔ

Հարկ է ի մտի ունենալ միշտ սա՛ զաղափարը րէ ո՛չ րէ մարմինին համար պարփելի ապրիլ, այլ րէ յենի կրեա ապրիլ առանց մասն միարին: Երեւ յափազանց փատած մենակ մնար, կ'ամբոխութին եւկրիպնեռով, կ'ընկունիկ հոգերով, եւ կ'ենրակութին հաւառ ու մեկ հնանուրեանց: Կենեղիկ բարյական մը ոյինի է այն մարդուն համար, որուն համար ժղոփիական ամեն ինչ է: Տամի մարմինին բոլոր այն խնամքները գործ կը պահանջ ան, բայց զիշեանի համար յուղերն մէջ նետէլ զայն, իր բանականութիւնը՝ պաթիը եւ պարտականութիւնը կը հրամային:

ՍԱԴՈՒԿԵՑԻՈՑ ԱՂԱՆԴԸ

Ա. ՈՐՈՇՔ ԵՆ ՍԱԴՈՒԿԵՑԻՈՆԵՐԸ

Սագուկեցիք քաղաքական կուսակցութիւն մը կը կազմէին աւելի քան թէ կրօնական, ու կը պատկանէին նույիրապետական կարգին կամ բարձր հոգեռորականութեան։ Պործք Ասաքիւլցը կը յիշէ օքանանյայապեան ու ամէն իր հետ եղողները, որոնք Սագուկեցիք աղանդէն էին ։ (Պործք Բ. 17)։ Սագուկեցիք անունին իմաստը կը թուի ըլլալ և Որդիք Սագովկի օ, բայց յիսունի չափ Սագովկներ կան յշուած Հին Կոտակարանի մէջ։ Ասոնցմէ ո՞ր Սագովկն է արդիօք խոզի առարկան։ Սողոմոնի ժամանակից ամէնէն հոչակաւոր Սագովկ քանանյայապեած անշուշտ, որուն սերունդէն էին քանանյայապեաները մինչև Եղեկելի ժամանակ (Բ. Մնաց. Զ. 8-15), ու Բարելոնի գիրութենէն վերջն ալ տակաւին երկար ատեն այդ սերունդին վրայ մեաց քանանյայապետութիւնը Սագուկեցիք հարուստներէ ու մանաւանդ նույիրապետական կարգի բարձր աստիճանաւորներէն կողմուած կուսակցութիւն մը ըլլալով՝ անոր անդամները եթէ ոչ արեան գիծով գէթ պաշտօնով իրենք գիրենք Սագովկ քանանյայափետի ժաւանգորդները կը համարէին Սառուգաբանական այս բացատրութիւնը չենք կրնար ըստ թէ ճիշդ է բոլորովին, բայց հեռի չէ հաւանականութենէ։

Փողովսուրդէն մեկուսի ապրելուն համար Սագուկեցիք նուազ բազմաթիւ էին քան Փարիսեցիները, ու ասոնցմէ յետոյ է որ անոնք ալ մտան պատմութեան մէջ։ Հակամարտութիւն կար ընդհանրապէս՝ ոչ թէ փարիսեցիականութեան ու նույիրապետութեան միջեւ (վասնզի Փարիսեցիները թշնամի չէին քահանաներուն), այլ Փարիսեցիներուն և նույիրապետական կարգի բարձր ասիճնանաւորներուն միջն, և քահանայից իշխաններու լըմբանութենքն ու յաւակնութիւնները պատճառ եղած էին առոր, Աւելի ճիշդ պիտի ըլլար ըստ՝ թէ այդ հակամարտութիւնը առաւելապէս քաղա-

քական գետնի վրայ ծագում առած էր, վասնզի նույիրապետական ազնուականութիւնը, որ օտար աիրապետութեանց ըլլրջաններուն իր ձեռքն ունէր մասնակի պատիւններ կը վայելէր, ունէր նաև պաշտօնէն անդաման օգուաններ, ուստի բնականաբար պիտի ցանկան լինակը։ Ազգին օգուան ալ կը պահանջնէր օր, կարելիս թեան սահմանին մէջ, գոհացում տրուէր օտար աէրերու, որոնց ձեռքն կը գոտուէր երկրին ճակատափիրը։ Ասով կը բացատրէր պաշտօնի վրայ եղող քահանայապետներու հետզհետէ հելինականութեան մօտենալու ձգուումը ու այն ջանքերը, զորս գործ կը դնէին անոնք՝ լիցնելու համար յուշայականութիւնը հեթանոսական աշխարհէն բաժնող անցպետը։ Սագուկեցիք այսպիսի ուղղութիւնը մը ընդգրկելով կը գործէին թէ՝ յօդուա պզին, թէ յօդուա իրենց մասնաւոր շահերուն։ Իրենց այս ուղղութիւնը, որ չետուած էր մանաւանդ յունական տիրապետութեան շրջանին, շարունակուեցաւ Մակարեանց ապստամբութեան ատեն ալ։ Մինչ Փարիսեցիք, խորապէս անհամակիր օտար լուծին ու գաղափարներուն, սերտիւ կապուած էին Օրէնքին՝ առանց երկիր կրիստ անոր ծանր հաւեանքներէն, անզին նույիրապետական ազնուականութիւնը կը ջանար նուազեցնել քան թէ աւելցնել հեթանոսներու հետ տորակարձութեանց պատճառները՝ ընդունելով անոնցմէ այն ամէնը, զորս կարելի էր հաշտեցնել Մագիստրական Օրէնքին էական սկզբունքներուն հետ։ Գտնուեցան քահանայապետներ, ինչպէս Յասոն, Մենեղաւու և Յաղիմոս, որոնք չափազանցութեան տարին իրենց հելլինասիրութիւնը։

Սագուկեցիք հետացուեցան ասպարէզէն Մակարեան քահանայապետներու՝ այսինքն Յօվիսթանի ու յաջորդներուն իշխանութեան օրով, որոնք իրենց հայրենասիրութեամբ ու Օրէնքի հանդէպ իրենց նախանձայութեամբ Փարիսեցւոց կողմին յարիցան։ Բայց Յովկանէս Հիւրկանոսի աւտենէն Սագուկեցիք նորէն ասպարէզի վրայ երենալ սկսան ու թագաւորը անոնց կողմը բոնեց, ինչպէս նաև յիտոյ՝ Արիստոբուզ Ա. Կ Աղեքսանզը Յաննէոս։

Մեծն Հերովդէսի ու հռոմայեցի զատաւորներու ժամանակ Սաղուէկեցիք՝ հակոռակի Փարիսիցոց՝ դիւրաւ հոմակերպեցան տիրող վարչաձեխն ու վերստին ձեռք առն կրօնական բարձրագոյն պաշտօնները։ Իրենց ազանդը, սակայն, հրէական ազգայնականութեան երեսէն ու այլեայլ աննպաստ պարուգաներու բիրումով, առանց գրեթէ հետք մը ծփկեռ, վերջ ի վերջոյ մրանգամ ընդ միշտ անհետացաւ մէջտեղէն։

Բ. ԱԱԴՐՈՒԿԵՑԻՈՑ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵՒԽՆԸ

Սաղուէկեցիք քաղաքական կուսակցութիւն մը միայն ըլլալով՝ չէին կրնար ամբողջութեամբ շահագրգոսուի կրօնական հարցերով ժողովուրդի մը, որուն համար կրնանք լսել թէ ամենայն ինչ էր կրօնքը։

1. Օրհնիք. — Անոնք ընդհանրապէս կը միրժէին Փարիսիցոց հնարած մարդկացին աւանդութիւնները և ուղղակի յարած էին Օրէնքի բնագիրին։ Եւ սակայն այդ աւանդութիւններէն անվարան կ'ընդունէին այն կէտերը, զորս նպաստաւոր կը համարէին իրենց։

2. — Հոդիներու գոյուրիւնը. — Անոնց համար չկար ոսէ հոգի՝ բացի Աստուծմէ. հետեւապէս գոյութիւն չունէին ո՛չ հրեշտականներ և ոչ մարմինէն բաժնուած հոգիներ, ուստի և չկար մնուիլոց յարութիւն։ Մարդուս հոգին դադրած ըլլալով գոյութիւնէ չէր կրնար այլեւս կ'նշանանցնել մարմինը։

3. — Նախախնամուրիւն. — Սաղուէկեցիք կ'ուրանային ոսէ աստուծածին ներդործութիւն մարզոց արարքներուն վրայ, ուստի քայլ մը միայն կը մնար լսելու՝ թէ անտարբեր է Աստուծ մարզոց կհանքին ու ընթացքին հանդէպ։ Կ'ուրանային նաև հանդերձեալ կեանքի մը գոյութիւնը։

Նախախնամուրիւն ուրցումին հետեւանքն էր՝ չհաւատալ թէ Աստուծ կը շահագրգոսուի իր ժողովուրդի վիճակով. այդ պարագային աւելորդ էր ակնկալութիւնը Մեսիային, որ պիտի գար քրեկերու իրարացիւ հետեւապէս իւնացիութիւնը էր

օգուտ քաղելի օտար տիրապետութեան ըստ աեղծած կացութիւնն ու վայելել կեանքը։ Առակին կենցագտուէր մնձատունը սաղուէկեցիք մը ըլլալ կը թուրի. հանգըստաւէտ կեանքէ մը վերջ անիկա յանկարծ կը փոխադրուի այնպիսի աշխարհ մը, որուն չէին հաւատար ո՛չ ինք և ոչ իր հինգ եղբայրները (Ղ. Ժ. 19-31)։

4. — Ոնրական օրհնիք. — Որովհետեւ Սաղուէկեցիք Օրէնքի տառին կառչած էին, այդ պատճառու ոճրական օրէնքի մասին աւելի խստապահանջ էին քան Փարիսիցիւնըը, ու կէտ ա կէտ գործադրութիւնն ըստ պահանջէին փոխվրէժի կամ այն լին արամի օրէնքին, մինչ Փարիսիցիք կը գոհանացին լրամտիկան տուգանքով։

5. — Միական խնդիրներ. — Սաղուէկեցիք կը խստէին Փարիսիցիներու հնարած օրինական մարդութեան հաղարումէկ կանաները։ Անդամ մը վերջիններս մարդու ըլլալով ֆանարի ճրագարանները, Սաղուէկեցիները կ'ըսէին ծաղրանքով թէ անոնք օր մը արեի զունան ալ պիտի մաքրեն։

Սաղուէկեցոց կարծիքով ամէնօրեայ զուները պէտք է ըլլալին ո՛չ թէ ինպատաս ծանարի զանձին, այլ ինպատաս մասնաւորներու Անոնք ծխուկան արարտուութեանց մէջ շարք մը ձեւապաշտութիւններ միայն կը տեսնէին և ոչ այլինչ, ու չառարեր կործ մը նկատենէն համար էր որ կը կատարէին արարողութիւնները, թէկ կը ջանային որ կարելի եղածին չափ պարզ ըլլան անոնք ու ոչ երկար ու մանուածապատ։

Գ. ԱԱԴՐՈՒԿԵՑԻՈՑ ԸՆԹԱՑՔԸ ԹԻՍՈՒՄԻ ՀԱՆԴԵՊ

Եթէ Սաղուէկեցիք երբեմ կը միջամաէին թիսուսի կեանքին՝ պատճառ այն էր, որ յանձին գալիքիացի Վարդապետին կը տեսնէին նորազանդ քարոզիչ մը, որ եկած էր վերիվայր ըլջիլու հաստատուած կարգերը, ինչոր կրնար Հոսոմի զայրոյթն ու վրէժինդրութիւնը հրամարի ազգին վրայ։

Անոնք ալ Փարիսիցիներուն հետ գացին ունինդրելու Յովհաննէսի քարոզութեան և օնունդրէ իմիցս իրաւացի կու

չումը հաւասարապէս լնդունեցան անկէ (Մաթ. Գ. 7): Փարիսեցիներուն հառ անոնք ալ երկինքէն նշան խնդրիցին Յիսուսէն (Մաթ. Ժ. 1): Բառ Փրկչը. թէ հարկ է խոյս տալ՝ ինչպէս Փարիսեցիներուն՝ նմանապէս Սաղուկեցիներու աղանդէն (Մաթ. Ժ. 6-12):

Յիսուսի կանքի վիրջին օրիրուն Սաղուկեցիք Տաճարին մէջ սաստիկ զայրացան Անոր գէմ: Ապացուցանելու համար՝ թէ չկայ մեռելոց յարութիւն, ներկայացուցին պարագան այն կնօջ, որ ըստ օրինի յաջորդաբար եօթը եղայրիներու հետ ամուսնացած էր, ու հարցուցին՝ թէ հանդերձեալ կեանքին մէջ անոնցմէ մէր մէկուն կինը պիտի ըլլար: Յարութիւնէն փերջ, պատասխանից Յիսուս, այցպիսի բան չի կրնար տեղի ունենալ, վասնի այն ատեն մարդիկ ամսուսնական կամ աշխարհային զործերով պիտի չըրադին բնաւ, այլ հրեշտակներու պէս պիտի ըլլան ու Աստուծոյ միայն պիտի ծառայեն: Փողովուրզ զարմացաւ այս պատասխանին վրայ, և Փարիսեցիները խիստ ուրախացան՝ տեսնելով որ Յիսուս կարկեցուց իրնց հակառակորդները (Մաթ. ԽԲ. 23-24, Մթկ. ԺԲ. 18-28):

Եթէ Սաղուկեցիք նուազ կը հետաքրքրուէին Յիսուսի զործերով քան Փարիսեցիները, պատճառն այն էր որ իրենց ազնաւակնի ու հարուստի զիրքը թոյլ չէր տար գաւառական գուեհի ամբոխին հետ շփում ունենալ: անոնք կը նախընտրէին Յրուսալէմէն զուրո չելլի ու վայելի հոն կեանքի դիւրութիւններ: Երուսալէմի մէջ էր որ Փրկչի կալանառումէն վերջ զործի վրայ եղան Սաղուկեցիները, ու տարակոյս չկայ՝ թէ, իրեն բարեկամ Հոռմայիցոց, միւսներէն աւելի անոնց ըսպանալիքները մնե կիսու ունեցան ու պարտաւորեցին Պիղատոսը մահուան վճռարձկել Յիսուսի դէմ:

Դ. ՍԱԴՈՒԿԵՑՏՈՂ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ԱՌԱՔԵԱԼՆԵՐՈՒՆ ՀԵՏ

Սաղուկեցիք իրեն տէր Տաճարին՝ կը զայրանան, տեսնելով որ Պետրոս եւ Յովհաննէս Յիսուսի յարութիւնը կը քառզէին հոն, ու կը բանտարկեն զանսնք:

Յաջորդ օրը Պետրոս Սինեղրիոնի ատեանին մէջ վիրատին կը վկայէ Յիսուսի յարութեան ու Սաղուկեցիք չեն կրնար զատապարտել զայն (Փորձք. Գ. 2, 10-23):

Թիչ յետոյ Սաղուկեցիք զարձեալ կը կալանաւորեն առաքեալները, բայց գիշերը կրեշտակի ձևամբ հրաչքով կ'աղջատին բանտէն ու կը զիմնն Տաճար ու կը քարոզն Յիսուսը համարձակի նորէն կը ձերբակալուն, ու երբ կը յիշեցնն Յիսուսը քարոզելու արգելքը՝ Պետրոս ի դիմաց իր ընկերներուն կը յայտարարէ՝ թէ և իրենք Սաստուծոյ հնազողութիւն պարտաւոր են աւելի՝ քան մարզոց ու ժողովի անդամները կ'ուզէն մահուան մատնել առաքեալները, բայց Գամադիէլի միջամտութեամբ կը գոհանան ձաղկէ միտյոն ու արձակել (Փորձք. Ե. 17, 34-40): Հուսկ ապա Սաղուկեցիք կը յիշուին Պօղոսի Տաճարին մէջ կալանաւորութիւնն ու Սինեղրիոնի տաեանը տարուելուն առթիւ, ուր անիկանարպիկութեամբ միմեանց դէմ կը հանէ իր զատաւորները, ներկայացնելով ինք զինքը իրեն փարիսեցի և յայտարարելով՝ թէ մեռելոց յարութեան հաւատալուն համար է որ կը դատուի: Ասոր վրայ հռոմայից արիբունը կը պարտաւորուի լուծել ժողովը՝ զատաւոլու համար Պօղոսը Սաղուկեցիներու զայրոյթէն (Փորձք. ԿԲ. 6-10):

Հրէց զարապետները իրենց զըրուանիներուն մէջ հապի այնուհետեւ պահեցն Սաղուկեցւոց յիշատակը, մինչեւ որ բոլորովին մոռացութեան մատնուեցան թէ իրենք են թէ անցեալին մէջ իրենց կատարած գերն ու զաւանած զարզապետութիւնը:

Հայացուց՝ Մ. Ե. Ն.

ԽՈՐՃՈՒՐԳ ՆԻ ԽԾՈՎՔ

Երկ իր ճամբորդ կը տառապիի, իր յաղախցի պիտի կարենավ հրանուի:

* * *

Բնուրեան և մարդկային բանականորեան դրյան մենաշնորհը չէ որ մանդը, միակը բոլոր կենաշեներուն մէջ, հասկնայ թէ ի՞նչ է կարգը՝ պաշշանութիւնը և յափը խօսելուն և գործերուն մէջ:

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

Զ Մ Ր Ո Ւ Խ Ի Տ

Խած ջուրին մէջ անտառներու տեսիլ - Զմրուխս:
Պարտէզներուն մէջ աչքի պէս փայլող ջրկայք,
Աղուոր անգութ աչքեր, նըման խորհրդաւոր
Սնառին, ուր ոսկի յովազն կը յածի, սէրն:

Գարուն գոյնի. տարփատենչիկ երազ՝ գետին
Մէջ ցոլացած գեռաբռնսիկ բարմ սաղարքին
Եւ նոզիի մը՝ ողղուած անքիծ ողբէն
Կոյս բիւրեղին մէջ ներկլւած կանաչութեան:

Ու զէտ երազը նոյն ատեն զազիր կընոչ,
Ռուն նայուածքը կանաչ՝ ծանր՝ բոցանըօյլ
Կախարդրւած սիրտերուն մէջ կը բորէ բոյն,

Կանաչ ծովեր, տեսիլ սըլսուր նաւթեկութեանց...
Զմրուխսներ. մեծ աչքեր դիւրիչ ու մոգական՝
Հորիզոնին վրայ երկնցած ծեր ըսփիճնսին:

ALBERT SAMAIN

Մ Ե Ծ Ա Ր Զ

Մեծ Արշն, անեղբ ովկիանին կըղզեկումքն այդ,
Տեսնըւելին դեռ աւս առաջ կը նըռուլէր,
Քաղցէացի հովինեն դեռ չը բափառած,
Չը բընակած՝ մարմններու մէջ դեռ նոզին:

Անկէց ի վեր անքիւ ողջեր կը նրկատեն
Կուրցընելու չափ սըլառուած ողին նեռաւոր.
Ան, անտարքեր զինք չաշարող նայուածներուն,
Պիտի փայլի մեռելներու վերջինին վրայ:

Զարմանալի՛ որ երիտոնեայ տես չ'ունիս բնաւ,
Ո՛վ դըմքնդակ ձեռ դու, նըռօրիս եւ միակերպ.
Սեւ ասուիի վրայ գամուած եօքն ոսկի սեպ:

Գանդաղութիւնը բացայայս ու լոյսրդ ցուրտ
Կը տարտղնեն հաւասէր. գո՞ւն էիր որ նախ
Քըննել ըսկիր երեկոյեան աղօքս ինծի:

SULLY PRUDHOMME

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ

ՄԻՋԵՐԿՐՈԿԱՆ(*)

ԳԱՂԱՔՎՈՐԹՈՒԹԵԱՆ ԱԶԴԵՅՈՒԹԻՒՆԸ

Հնդեւրոպական գաղթականութիւնից առաջ երկրագունդը դատարկ է էր. ամէն տեղ կային զանազան ազգեր ու ժողովուրդներ, ոմանք նոյն խսկ աւելի բարձր քաղաքականութեամբ քան հնդերոպատշիները: Այսպէս Եւրոպայի արևմտեան մասում բնակում էին իրենները, հրւիսիսում Բըրբիտանացին, միջն և հարաւային մասերում Լիքուրները, Ետրուսկները, Պելազները եւն: Այս բոլոր մէջ նշանաւոր էր Միջերկրակոն կամ Եգէսական քաղաքան կրթութիւնը, որին պատկանում էին մի կողմից Կրետացիք եւ միւս կողմից Փոքր Ասիայ Արեւմտեան մասի ժողովուրդները, Հիւզիացիք, Լիւիացիք և Կարիացիք, ու րոնց լեզուի մասին ոչնիչ չգիտենք: Հընդերոպացիք շիման մէջ մասն այս ժողովուրդների հետ զանազան հանգամանքներով: Կամ իրեւ հարեսն, կամ իրեւ տիրող, եւ կամ գտան նրանց իրենց ճանապարհի վրայ, գաղթականութեան ժամանակ: Այս յարաբերութիւնները չեն կարող ազդեցութիւն չունենալ հնդերոպացոց լեզուի վրայ: Նրանցից սովորեցին երկրագործական զանազան գիտելիքներ, ձիադարմանութիւն, նաւաշնուռութիւն, մետաղադրութիւն եւն: Անշուշտ զանազան բառեր փոխառութեամբ անցան իրենց: Արդ մեկ անձանօթ է այդ ազգերի լեզուն: Միեւնոյն ժամանակ լեզուաբանութիւնը միջոց չունի երեսն հանելու հընդերոպացիների այն լեզուն, որ գործ էին ածում անմիջապէս նախ քան գաղթականութիւնը. ուստի մենք չգիտենք թէ որոնք են այն փոխառութիւնները, որ «-

հնդեւրոպական ժողովուրդների լեզուից անցան հնդեւրոպացիներին:

Առնենք յոյները, իրեւ մեր աւելի մերձաւոր հարեւանները, որոնք անցան այն ճանապարհով, որով և հայերը:

Յոյները Քրիստոնից 2000 տարի առաջ նախահայրենիքից իշտան դէպի հարաւ է շփման մէջ մտան այս ժողովուրդների հետ: Իրենք անքաղաքակիրթ ժողովուրդ էին: ուստի անշուշտ շատ բան պիտի սուվորէին իրենց նոր և աւելի քաղաքակիրթ հարեւաններից:

Երբ քննում էնք յունարէն լեզուի բառանը, անշուշտ շատ բառ բացատրում է հնդերոպական լեզուաբանութեամբ, շատ բառ պատկանում այն բառովանձին, որ հնդերոպական նախալիզուի հարասութիւնն էր կազմում, որ յոյներն էլ իրենց հետ բերին իրեւ ժառանգութիւն: Բայց մնում էն գետ շատ բառեր էլ, որոնք ոչ միայն մնում են առանց բացատրակիրեան, այլ և հակառակ են հնդերոպական լեզուաբանութեան արժանաների կազմութեան, մասնիկների յարագրութեան եւ բառերի ածանցման օրէնքներին: այս բոլորը համարում են նոյն ժողովուրդներից փոխառեալ բառեր:

Որինակ լարիրինթոս բառը, որ ըստ նիւթի էլ պատկանում է արդէն Կրետէին և Եղիպտոսին, հնդերոպական երեւոյթ չունի, նրա մէջ զանուած ինը մասնիկը գտնուում է մի քանի յատուկ անունների մէջ, ինչպէս Կորերու, Սամինրու, Ամարինրու, Տիրինրու, կան նաև հասարակ անունների մէջ, ինչպէս լիրինրու, երեխինրու, հիւալինրու եւն:

Այս բոլոր Միջերկրական փոխառութիւններ են յունարէնի մէջ:

Նման փոխառութիւն են կիւպարիսու, որից՝ հայերէն կիւպարիս (նամի), որի մէջ իսու եգեական մասնիկ է, բագոսական խաղերից րդիամրու, որի հետ նաև իսմրէ և դիրամրէ:

Փոխառեալ է համարում նաև վարդը, որ տուել է յունարէն, լատիններէն եւ պարկերէն բառերը եւ այս վերջնից էլ հայերէն վարդ:

Նորագիւտ կամիսներէն (հաթեան) լեզուն էլ ունի զանազան այսպիսի փոխա-

(*) Պօք. Հ. Անառեանի Պատմութիւն Ճայերէն Լեզուի Ս. Թարգմանաց-Գրւեան մրցանակը պահպան գրտին Գ. լուսիք:

ոռութիւններ, որոնք սակայն դեռ չեն ուշանալի պատշաճ ձևով:

Մեզ հետաքրքրող Միջնարկական բառերից յիշենք հետեւալիները:

1. Գիմի. — Հնդկերպագիք բնակութեալ տւելի հիւսիս, չեն ճանաչում խաղող և գինի պատրաստել չգիտենին: Որթատունկի մշակութիւնը և խոզողից գինի պատրաստելու հուլտուրան ծանօթ էր սակայն Միջնարկականի հին քաղաքակիրթ ժողովուրգին, որից անցաւ Մեմորաններին: այսպէս երբ յայն, եթովպ վիճն, արաբ. վայն, ասուր. ինու, իսկ ընդհանուր սեմական նախալեզում վայնու: Խաղողի մշակութիւնը ծանօթ էր Եղիսաբացոց Ն. Ք. Գրդ հազարամիակում, իսկ հարաբ. արեւելան Երրուայում Ն. Ք. 1700—1500 թուերին: Հնդկերպագիք ժողովուրգուները նոյնը փոխ առին սողակի Միջնարկագիք այսպէս յն. ոյնու, ալբան. վան, լու. վինում և հա. գինի: Լատի. նախանից փամուսութեամբ բառը անցաւ կերտական և գերմանական խմբին, (գոթ. վիճն, հրգ. վիճ, գերմ. վայն, անգլ. ուայն, հրու. վիճ, գիմր. գիմ), զերմանականից էլ բարտիկ-սլաւական խմբին: այսպէս լիթ. վիճնս, հու. վիճն, ուսու. վիճն: Աւելի յիշոյ հնդկերպականներից բառը անցաւ ոչ-հնդկերպական լեզուներին: ինչպէս սլավականից մորդուին: վիճնա, իսկ հայերէնից էլ կովկասեան զանազան լեզուները: ինչպէս վրաց. վիճնի, դիվինո, մինգր. վիճնի, լազ. դուինի, վիճնի, իշենի, ինգիւ. վիճնել, ուան. վիճնել, վիճնալ, թուշ, վիճ, վիճն, ուսու. վիճ, վիճնի, ափխազ. ազգի, նախ քան գինիի ներմուծումը հնդկերպագիք իբրև ոգելից ըմպելիք գործածում էին մեղրաջուրը, որ կոչւում էր մեղրիու: — գինիի ներմուծումից յիշոյ մեղրաջուրի գործածութիւնը, նրա հետ նաև բառը չնջուեց համ առ առուելն ստացաւ գգինի նշանակութիւնը: Հայերէնի մը բարուրովին վերացել է, մընում են միայն յայնը յն. մերիւ, հրգ. մետ, իրը: միդ:

2. Զիրկին և լուլ. — Հնդկերպագիք ունէին կենդանական իւզ, բայց բուսական իւզ չունէին: Որթատունկի մշակու-

թեան նման կարենոր և Միջնարկական քաղաքակրթութեան ծանօթ էր ձիթենու մըշակութիւնը և նրանից էլ իւզի կամ ձեթի պատրաստաւթիւնը: Յոյները հարաւում ճանաչեցին ձիթենին և ձեթը: Միջնարկական նախանձեւ յայտնի չէ, բայց նրանից են ծագում փախառաւթեամբ մի կողմէց յն. երայն, երայս և միու կողմէց հայ. իւզ, որի հնագոյն ձեռն է եւդ, ծովովըրդական եղ: Յունարէնից փոխ առին լատինները՝ ովկում, ովկու, ովկու ձեերով և որից էլ գոթ. աֆէ, հրգ. ովկ, գերմ. եօլ. օվկ, լիթ. ավերս, ալբան. ովկի: Աւելի ուշ հնդկերպականներից անցաւ ոչ-հնդկերպական լեզուներին: այսպէս սլավականից հունգ. օյայ և հայերէնից թուրք թութարական հալ:

3. Խնձոր. — Այս պտղի համար երկու զիխաւոր բառ կայ հնդկերպական լեզուների մէջ: Հիւսիսային և արեւմտեան Երրուայի լեզուները ներկայացնում են մի ձեռ, որ է հուլ. արշլու, լիթ. որուլս, հրգ. ափփու, հուլ. արայ, անգսու: ապավէ, հուլ. եպիկ, հարուս. փորիկ: արանց հետ նոյն է նուև Կամպանիոս Արելլու բազի անունը, որ բուն նշանակում է խնձորաբեր (Ասկերի լեզուով): Այս բառը փոխառեալ է երրուայի ոչ-հնդկերպական մի լեզուից, որ խօսում էր նախքան հնդկերպացոց տարածումը: Հարաւային երրուայում ունինք յն. մեղն, որը մարտն, կամիս: մահղան եւ լու: մարտն: այս բառը Միջնարկական լեզուի բառ է և անշուշն ներկայացնում է մշակուած ընտանի խնձորի մը տեսակը, որ Միջնարկացներից անցաւ յայնի հասարակ տեսակը: Հայերէնը չի ճանաչու ոչ արլու եւ ոչ մարտն ձեւը, այլ ունի յինձու, որ նոյնպէս հնդկերպական չէ և ապսոնվարար փոխառեալ է Հայաստանի ընիկ խալզիներից:

4. Թուզ. — Այս բառի հետ նոյն են յն. տիկին, սիկին և լատ. վիկուս համանիշները: բուլորն էլ փախառեալ Միջնարկական աղբերից: Յայտնի է որ թուզը չի առաւմ հիւսիսային երկիրներում, որ չի առաւմ առաջ առատ է Միջնարկականի շրջանում:

5. Առիւծ.— Այս անասունը հենց նոր քարի շրջանին եւրոպայի ամենամեծ մասից վերացած էր. չկար նաև հնդկութագական նախահայրենիքում. այս պատճառով էլ հնդկութագական լեզուների մէջ մի եւ ընդհանուր բառ չկայ առիւծի մասին. Աւաստայում զեռ առիւծ չէ յիշուում: Սահսկրիտը ունի պինհա բառը, որի հետ միանում է ծագմամբ հայերէն ինձ. այս երկուսը միասին ենթադրում են հնի. սինգուլ ձեւը, որ անշոշա փոխառեալ է մի ոչ-հնդկութագական հին լեզուից: Եւրոպական լեզուներում շատ տարածուած է մի ուրիշ բառ, որտ. լեռ, հրգ. լեռ, նրգ. լեռի, մթ. լեռ, հոլ. լեռ, միու. լեռ, հկիմք. լեռ և յն. լեռ, ին ձեերն ունի: Սրբանց բոլորի մայրն է յունարէնը, որից փոխառեալ է լատինը և սրբնից էլ բոլոր միւս եւրոպական ձեերը: Բայց յունարէնն էլ փոխառեալ է Միջերկրական լեզուից, որից ծագել են նաև երբ. լայիշ, լարիյ, եղիպտ. լարու եւն.:

Բայց աններում զեռ կային առիւծներ, ինչպէս որ Հերոզար յիշում է Քսիերգսէսի ժամանակ Մակեդոնիայում (կ. 125): Հայերը իրենց ճանապարհ վրայ գտան առիւծը և տուին նրան այս անունը հանելով հնդկութագական րեւզ արմատից որ նըշանակում է մոնչել: Առիւծը գերազանցապէս մոնչող գազան է:

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒԽՆՁԻ

ՀԻՆ ԹԱՐԻԴՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ

(Շար. Սիրն 1935, էջ 258էց)

Այս աշխատանքը սակայն չէր բաւեր Եւրոպիմսի: Արեկեթ կատարած իր երկրորդ ճամբրորդութեան ժամանակ, զոր ձեւնարկեց Դամասոս պապին մահէն յետոյ (384), վերջնականապէս Բեթղեհէմ հաստատուելու համար, Որոգինչսի Վեցիշեանները ուսումնասիրելու համար օգտական կեսարիոյ մէջ իր բնակութենէն: 386 էն վերջ. այս օրինակին համաձայն սուզութիւններ կատարեց Հին Կտակարանի բազմաթիւ գրեանց, թերես ամենուն վըրայ, մանաւանդ Սազմոսարանին վըրայ. խնամք տանելով նաև նոյն իսկ զնել Վեցիշեան բնագրին աստղանիշերն ու բրգաձեւերը: Եւրոպիմսի այս նոր Սազմոսարանը անմիջապէս ընդունուեցաւ ի Կոլուա. և որ անուանակոչուեցաւ Psalterium gallianum: Ան եղաւ Հոսվմէական ժամազըրգին և Վուկագոյին Սազմոսարանը, Հին Կտակարանի այս երկրորդ վերաբննութենէն, Սազմոսարանէն զուրս, միայն Յուրայ գիրքն է որ կը պահուի: Միւս Կողմանէ, մինչ այսպէս կը վերաբննէր Հին Կտակարանը, Եւրոպիմսու որոշած էր երրայիցերէնի վրայ կատարել նոր թարգմանութիւն մր: Այս թելազորութիւնը իրեն տուած են իր բարեկամներն, որոնք կը խնդրէին իրմէ պատրաստել լատիներէն բնագիր մը որ լիապէս յարմար ըլլար սկզբնագրին: Այս խնդրանքը կը համաձայնէր երբայական բնագրին համար միշտ անզ իր նախասիրութեան: Ասկէ զատ, նոր թարգմանութիւն մը իրեն կը թուէր թէ յարմար պիտի ըլլար հայթայթելու որդինաւոր նոր զէնքեր հրէից հետ այն վիւնաբանութիւններուն մէջ որ միշտ տեղի կ'ունենային: Բեթղեհէմի իր միայնութեան խցիկն մէջ 390ին սկսաւ Հին Կտակարանի թարգմանութիւնը աւարտելու համար

ԽՈՐՃՅԱՐԴ ԵՒ ԽՈՍՔ

Խոնկու տեղ լոել, տարածուելու տեղ ամփոփուից զիշնալլ երամիկ յատկուրիւն մ'կ, զոր իիչ մատղիկ տվուուրիւն ունին ձեռն րեւրելու: Երեւան ենթանուն պիս, իմբղինմին իրապիս անձնառությունութիւններին կը կարծեն, եւ դրախտարար այդ յանձնապատճան վասակուրիւննեն ի որ զանեն կ'արցիկ իրենց աշխարհի արծանիթին զզացումիմ վրայ հաստառած համուզում վշ՝ լուսանակ, օգտեկ այն ամեն բաներեն զրու պիտի կրնային իրացնել, հարշաւանայք օգտակար յառաներեն զրու իրենց պիտի տային վիրաբերները զոյսացած շահագրգութիւնը,

գոյն 405ին։ 390էն սկսեալ իր թարգմանած առաջին գրքերն էին Սամուելի երկու գրքերն և Թագաւորաց երկու գրքերը։ Շարունակեց սազմոններու թարգմանութիւնը 311ին, Մարգարէիցը՝ 395ին, Յորինը՝ 393ին, Եղրաս-նեեմի՛ 395ին, Մնացորդաց՝ 396ին, Առակաց, Ժաղովորի և երգ երգոցի՝ 397ին։ Հնգամատեանը՝ 398ին և 404ին, Եւսուայ, Դատաւորաց, Հոռովի, Եսթիերի՝ 405ին։ Բոլոր այս նախականն զրքերը ուղղակի թարգմանութեան երրայցիցին գրայն։ Եթոնիմութարգմանանց նաև արամական բնագրի մը վրայէն Տօվրիթի և Յուլիթի երկրորդականն երկու գրքերը — թերեւս առաջնը իր աշխատանքին սկիզբը, երկրորդը թիրես միայն ամենէն սկիզբը, — Դասիելի երկրորդականն հատուածները յունարէնի վրայէն թարգմանած է անձանօթ թուականի մը մէջ։ Ըստ հակառակն, թարգմանած չէ նույերի երկրորդականն մասները, ոչ ալ իմաստութիւնը, Սիրագը, Բարութը և Մակարայցիները։ Ժամանակազրական կարգը որով կատարած է այս թարգմանութիւնները կը համաձայնի իր բարեկամներուն յաջորդական խնդրան քններուն։

Եթոնիմութիւն Հին Կտակարանի բազմաթիւ գիրքերուն համար ամրոջութեամբ նոր լատիներէն բնագրի մը հայթայթից։ Արգարե ստուգիւ կատարեալ բնագրի մէջ որ պատրաստուած է իր ժամանակի հին սկեզբուոյ Ս. Դիրաց մեծազոյն գիտնականին ձեռքով։ Եթոնիմութարգութեամբ է զայն երրայական բնագրին վրայէն, բարձրորդէն զիտական ճանչցուած սկզբունքներուն համաձայն Այսօք ալ ընդունուած է բազուական մեկիչներուն կողմէն թէ այս Անդութիւնը հին բոլոր թարգմանութիւններու լոււագոյնն է։

Միւս կողմանէ, Եթոնիմութիւն չկրնար չվճարել ինքն ալ իր տուրքը իր ժամանակուն, իր միջավայրին և իր կենաց պարագաներուն համար կը ներկայացնէ իր գործին ամսիքը զոր թիւնը չարգիւեր միւնոյն ժամանակ իմաստի սկսուած չարգիւեր միւնոյն ժամանակ կատարեալ առնել իր թարգմանութեան ընդհատուները։ Առարկայական քըննութիւնը մը թոյլ բոյլ կուտայ անկողմանկալ կերպով հաւասարակշռել զօրաւոր և ակար կողմերը։

Առաջին առթիւ պէտք է յայտնել թէ Եթոնիմութիւն իր բոյոր կարելին ըրած է երայական բնագիրը համար համար։ Զէր ուզեր, բացարձակօրէն բան մը թարգմանել անոր իմաստը ըմբռնելէ առաջ, Ասոր համար էր որ իր տարիքին հակառակ, երբայցիցերէնի ուսումը սորվեցաւ և ուզեց, միծ գումարներու գնով, ապանովել, հրէայ գիտնականներու օգնութեամբ հատուածներ և մանաւանդ զժուարագիւտ զրքեր, օրինակի համար Յորը։ Միւնոյն նպատական կանենաւոր կերպով նկատի առաջ եօթանասնից, Ակիւզոսի, Սիմմաքոսի և Թէտողիոնի յունարէն թարգմանութիւնները։ Եթէ հակառակ այս բոլոր ջանքերուն, շատ բառեր և նախապատութիւններ իրմէ խուսափած են, պէտք է զիսնուլ թէ այսօք ալ, երբայական Աստուածածունչը կը պարաւնակէ բազմաթիւ մթութիւններ զոր չկրնար փարատել արգի այն քննարանութիւնը և մեկնարանութիւնը, թէ Եթրոնիմութիւն իր աշաց տակ ունէր ոչ-ձախաւորեալ բնագրի մը, և թէ իր օրով, ինչպէս նաև եօթանասնիցի ժամանակ, թարգմանիչը իր տրամադրութեան տակ չունէր երբայցիցերէն կարգալու և հասկնալու համար ո՞չ քերականութիւն եւ ո՞չ բառարան, բայց միմիայն բերանացի ուսուցումը։

Միւնոյն ժամանակ Եթրոնիմութիւն կը չանար հասկնալու երբայական սկզբնագրին իմաստը, ոչ նուազ գիտակցօրէն կ'աշխատեր կարելի եղածին չափ զայն լատիներէն բացատրել։ Այս տեսակէտով երեք նպատակ կը հետապնդէր, ճշգութիւն, յատակութիւն և գեղեցկութիւն։ Իր մեծ մազպազումն էր նախ և առաջ հայթայթել բնագրի մը՝ բացարձակապէս համաձայն նախնական բնագրին։ Շատ անգամ կոչում կ'ընէր հրէեց կործիքին հաստատելու երբայցիցերէնի և իր բնագրին միշտ եղած յարմարութիւնը։

Ուզելով այսպէս թարգմանել բացարձակ ճշգութեամբ մը, ինքզինք գերի չի նկատեր սակայն երբայական տառին։ Ընդհակառակն, նկատի կ'առնէր լատինեղակուին ոգին։ ապէտք չէ որ մինք, կ'ըսէր, տառով մտազբաղուինք իմաստը կորսնցնելու չափ կապուելով սիրոբային, օրովհետեւ, ինչպէս այլուր զայն կը յայտնէր, ուա-

թարգմանչի մը սկզբունքը պէտք է ըլլայ բացատրել ուրիշ լեզուի մը մասնայատեկութիւնները այնպէս մը որ իրենին պատշաճնուցած ըլլայ: Այս հանոնին համաձայն, աւելի իմաստը կուտար քան թէ երրայիցերէնի բառերը. և հոգը ունէր երրայական Աստուածաշունչի գաղափարներուն տալ ձեւ մը ոչ միայն յստակ այլ նաև գեղագիտական: Այս նպատակով երրայական նախադասութեանց համակարգութիւնը կանոնաւորագուն կը փոխանակէ գեղեցիկ պարբերութիւններով, իր բացատրութիւնները կը գանցանին հոն իսկ ուր երրայիցերէնը կը պահէր մինչայն բառերը, ան կը համառատէր նախադասութիւնները, զանց կ'ընէր գրինութիւնները, մինչ միւս կողմէն, կաթերու նկատուած յաւելութերէն չըր գրկուեր:

Ասոնք են այն սկզբունքները որոնց համաձայն, Յերպնիմու աշխատած է իրականացնել ճիշգ, յստակ և գեղեցիկ թարգմանութիւն մը: Եթէ հաստատապէս անոնց հետեած ըլլար՝ պիտի ունենար կատարելապէս կատարեալ բնագիր մը: Դժբաղդաբար յաճախ անսանց անհաւատարիմ գտնուած է: Գլխաւոր պատճառը ան է որ շատ յարգ կ'ընծայէր այն աւանդական ձեւերուն զորս Հին Կոտակարանի գաղափարները ընդունած էին հին թարգմանութեանց մէջ: Այսպէս էր որ աւելի սամկական լատիններէնը կը զործածէր քան թէ գտառական լատիններնը: Իր բնագրին մէջ կը պահէ ընթացիկ բնագրին բացատրութիւնները և նախադասութիւնները. թէպէտես սիւալ ճանչցած էր զանոնք: Այդ պատճառու շատ երրայաբանութիւններ և քանի մը հելլենարանութիւններ սպրդած են:

Երբեմն ալ, ճշդութեան այս սկզբունքով առանց սովորուած ըլլալու, կը թարգմանէ խիստ տառացի եղանակաւ մը, այնպէս որ շատ հաստածներ անհասկութիւն կը զառնան: Երբեմն ալ, ընդհակառակն, յստակութեան և գեղեցկութեան պէտք չտեսնուած ժամանակ, խիստ ազատ եղանակաւ մը կը թարգմանէ:

Վերջապէս երբեմն ալ բնագիրը կը փոխէ իր հրէայ վարպետներուն խիստ դիւրութեամբ ընդունուած ուսքրիական աւանդութեանց ազգեցութեան տակ, կամ հոն կը ներմուծէ իր աստուածաբանա-

կան յատուկ գաղափարները: Այս վերջին ուղղութիւնը կը հաստատուի մանաւանդ միսիայւթեան նիւթին մէջ ուր ան պատասխանատու է շեշտած ըլլալուն, եթէ ոչ հնարած, քանի մը հասուածներու միսիական իմաստը:

Անկատարելութեան այս գանազան ազգիւրներուն պէտք է աւելցնել այն առապարանքը որով իր բազմադիմի զրադաւմներով հանդերձ Յերոնիմոս կատարած է իր թարգմանութիւնը, զոնէ քանի մը զիցերուն: Այսպէս էր որ թարգմանած է Տոգութիթ մէջ օրուան մէջ և Յուղիթ մէջ գիշերաւան մէջ, երբ հրէայ մը բարձր ձայնով իրեն կը թարգմանէր այս երկու գիրքերուն բնագիրը երրայիցերէնը, ան անմիջապէս լատիններէն դայն կը զուռցարէր: Անոր համար այս զրգերուն թարգմանութիւնը իր գործին ամենէն առաջն է:

Նոյնպէս ան երկք օրուան մէջ թարգմանած է Առակները, ժողովողը և երգ երգոցը, ինչ որ արգելք մը չէ եղած այս երեք գրուածները յարաւերաբար կատարեալ գործ մը ընկլու:

Յերպնիմու յետոյ իր շատ մը թերիները սրբագրած է իր մեկնութիւններուն մէջ:

ՄԿՐՏԻՉ ԵՊՍ. ԱՂԱԽՆՈՒԽԻ

ԽՈՐՃՅԱԲԴ ՆԻ ԽԾԱԳ

Երե մարդու, իր բովանդակ կատարելուն հասած վիճակով, վեճրածիններուն առայինն է, վեցինն է ամենց՝ երբ կ'այցի առանց արդարութեան: Զկայ, արդարեւ, աւելի ճիշտացին բան մը յան վիճակ անարդառութիւնը: Բայց մարդը ընուրենն ընդունած է իմաստութեան և առաջինքն պէտքին գեղեցիկ անականական պատճեն կը պարզանի:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՂԲԱՏԻ ԴՊՐՈՑԻ ՄԻ ԳԼՈՒԽԻ ԳՈՐԾՈՑ

(ԴԵՏԱՇԵՆԻ ԱԽԵՏԱՐԱՆԻ)

(Եար. Սիսն 1935, էլ 191 է)

Այս Ապրիլի թիվը, նաեւ Տիգրան Կոչուած, Գրիգոր և Շուշիկ Պահաւունիների որդին էք, Վահրամի, Վասակի և Գրիգոր Համբէկ եղբայրը, որ նշանաւոր հանդիսացաւ Անդի Ամենափրկիչ եկեղեցու շինուաթեամբ՝ կայւածներ և նույներ տալով և Ապօւզամբէնց գողտրիկ Ս. Գրիգորի նորոգութեամբ^(*): Նա ունէր և անձնական մատինագրան, ուր գտնուել է Փատի թուղթը Զաքարիա կաթողիկոսին զաթա^(**):

Բայց ամենից աւելի վանքը, Սանահինի հետ, կիւրիկեանների ուշազբաթիւնը պէտք է վայելած մինչ, որպէս նրանց տունական գերեզմանատաւն: Կիւրիկէի զուստր Մարիամ Ան և ԱԼԴ Թռուականներից մեծ յիշատակներ ունի այնտեղ. վերջին թռուականի արձանագրութեան մէջ յայտնում է, թէ «մեծ յաւազ շինեցի զուսնոս ազաթից ի վերայ հանգստարանաց մեր հույր, քուեր իմայ թռուասու քանաբն մաւր իմոյ թամուրային ինձ Մարիամու» և խնդրում է յիշել ազմեզ և զնախնի թագաւոր ազգականքն մեր, որ հանգուցհալ են առ զրունա սրբոյ կաթողիկէիս ի քայլութեամբ և յիշատակներից և Դաւիթ, կիւրիկէ, Արա թագաւորների, կիւրիկէի կնոջ Թամարի և նորա դուստր թռուասու քերեզմանները:

Կիւրիկեանների տկարանալու շրջանին վրաց, թագաւորները նոյնական բարեացակամ վերաբերմունք ունին զէպի Հաղբատորի^(***). ԺԲ. դարի վերջին քառորդին՝ Գէրգորի Ալիք ժամանակից Հաղբատը ենթարկուած էր անմիջապէս՝ ծագմամբ Արծրու-

նի՝ Մահկանաբերդի իշխաններին, որոնք այդ ժամանակից կարեոր զեր էին կատարում Հայոց և Վրաց պատմութեան մէջ^(*): Հաղբատը եւ արանց հանգստարանն էր, այնտեղ են թաղուած Գրիգոր Ամիրա, Քուրդ Ամիրա, Խաւուա, Սասնա. տոհմի նշանաւոր ներկայացուցիչներն են Տուրք ամիրայից զատ՝ Սաղուն աթարագ, որոր որդին Աղքաղազյ, որի որմանկար պատկերը մնացած է մինչեւ այժմ տաճարի հարաւային պատին՝ ներսից^(**): Այսակա է թաղուած Դովլի, Զաքարի և Խեանէ եղբայրների Փոյրը, Քրզի քրոջ ազիկից, որի որդին և թռունորդին Հաղբատի նշանաւոր եպիսկոպոսները եղան Յովաննէս Ա. և Դ. : Ուստի իշխանական տոհմեր ևս գերեզմանատուն ունէին, շինարարութեամբ կամ նըւիրատուութեամբ կապուած Հաղբատի հետ, ինչպէս Դէսումեանք, Ուքանանք, Վաղուտեանք և նոյն իսկ հեռաւոր հայ Որբէկեանք:

Այսպիսի հոգանաւորութեամբ, ընականաբար, Հաղբատը պէտք է հետզհետէ բարձր զիրք ձեռք բերէր մեր եկեղեցական նույիրապետութեան հոգեոր կեանքի մէջ. Ուսահացին և Թանձակեցին պատասխան են, թէ ինչպէս Դաւիթ Աննաղին որդին կիւրիկէն՝ Անիի Բարսեղ եպիսկոպոսին ՇԼ = 1131 թուին Աղուանից Յովսէփ կաթուղիկոսի ձեռքով կաթուղիկոս է ձեռնադրել տալիս Հաղբատում, իսկ իւր դրաներէց Սարգսին՝ նորնննայ Բարսի ձեռքով եպիսկոպոս նոյն վանքի^(**): Սարգսի յա-

(*) Ալշան, Երևակ. 82-84, 51-54, Կոստանանցանց, Գրիգոր Մագիստրոսի թղթերը, 1910, ժէ. և 41:

(**) Տաթեւի Երև. N 122. « գուաւ բուժիթ ի համբեան Տիգրանայ Գահւաւունոյ » :

(***) Երզնկեան, 32-33:

(*) Տես. Եղագակաթ. հայոգիտական ժողովածու, Վաղարշ. 1913. մեր Զագալանից ժողովածու, 26։ Խաղբակեանք կամ Պողոսեանք, Վաղարշ. 1928. Եր. 3. 6. 21. 97. 134-5։ Երզնկեան. Հայուացարաւատ, 22:

(**) Ուսահացին, էջմ. Հրատ. 1898, 221։ Գանձ.

զորդն էր Գէսրգ, ժամանակակից և թղթակից Ներսէս Շնորհալու 1158 թ. նորամահարձանը զտնում է պարսպից զորս գէպի արևելք՝ Անսապատ կոչուած փոքրի եկեղեցը բազում. Այս է հանգիստ ան Գեօրգան արձանապրութեամբ (*). Սորոյանցորդն էր Բարսեղ Ա., (արձանապրութեաների մէջ 1180, 1185 և 1189 թ. թ. թ. յիշուած) ոչ միայն իր գեղագութեամբ Թամարա թագունու մհծարութին արժանացած, այլ և շինարար. Նորա ճեռագուաւորտեցնու Մարիմա Բագրատունու իր նախնեաց և պայտահնների գերիշմանները վիրայ կանցնած աղօթաւունը ՈՂԴ = 1185 թաշին, այս երեք առաջնակարգ գեղացկութեամբ նաշերը, որ հաստատուած են այդ շնչի արևելեան պատին, ապացոյ ևն, թէ քանգակագործութիւնը ինչպիսի՞ աղօթաւութեան էր հասած այդտեղ (պատկ. 10) և նա պատկանում էր Աւքանանց տոհմին, ինամութեամբ կապուած կրիրիկան տան ևն. Նորա ազգականները գեղարուեստական, շինարարական եւ այլ յիշատակներունին՝ Հայոցատում՝ ըստ արձանագրութիւնների (**). Սորոյան ժամանակ էր, ուրիշով Տղան թղթակցութեամբ կամ նույն էր համոզել Հայոցատեցիներին և Սանահնեցիներին զիջող զիրք բռնել Միութեան ինդրի նկատմամբ եւ Լամբրոնեցին իր զայրոյթն էր յայտնում առ Լիւռ զրած թղթի մէջ (***).

Բարզի յաջորդն էր Դրիվորիս, որին
«առւըրծ» տիտղօսն է տալիս Գանձակե-
ցին (***), Զաքարիայի և Խւանէի ազգա-
կանը, մասնակից Լոռուայ ժողովին, հին

Ղուկ. հրատ. Թիֆլիս, 1909, 91: Քառ Աւանայեցու, Ստեփանոսն է Բարսեղին ձեռնադրուր:

(*) Զեռ. Էջմ. N 1687. Նաև N 943 | 1525.
Թթուղդ առ ի ներսիսէ եղբարէք տն. Գրիգորիսի
Հայոց կամբարիկասի, Պատասխանի թղթոյն հե-
ռոցայ արկեեան պահպապսի պատճնորդի սուրբ
աշխանի Հաղպատայ, յազան հետապատելոյ առ
ի սուտութիւն զպամուռթի. Երանելոյ նաևա-
տակին Արարափ զարավարի մեծիւ:

(*) *Sbm bprqñkbañ*, 57-58. 25 (*4wakwadkib*
ññpbrqñmawdpm);

(***) Ընդհանրագնան ներսիսի Շնորհաւոյ էլմ.
Հրատ. 1865, 426, 433. Լամբրոսացու թաղթը՝
Անք քրիստոնազոր իշխանն մեր ինքնակալու-
թամբ կեսան։ Գրիգոր Տղայի թղթերի և ետ,
Վենետիկ, 1865:

(*) 92-161-164.
Digitised by

աւանդութիւններին նախանձախնդիր եւ
հակառակ նորամուծութիւնների, ինչպէս
զրանի մէջ պատարագելն էր, որի առթիւ
և բրածիծ անել տոււա կիլիկիայից եկած
Մինաս եպիսկոպոսին և նորա պաշտօն-
եաններին և զրկուեցաւ Հաղպատիք առաջ-
նարգութիւնից Զաքարիայից կողմից, նորա
փոխարքէն Յովհաննէն Ա. ին նշանակելով՝
Յովհաննէս արքէն Գրիգորիսից առաջ կարձ
ժամանակով Հաղպատիք առաջնորդ էր ե-
ղոմը (*), բայց թուած և հետացած էր
իր հայրենիքը՝ Խոչք, ուր ԱԾԿ = 1204
թ. Ակեղիկի է ընտուն և իր եղորդը Հա-
սանին յանձնաւու, որ Դոփի ամուսինն էր,
իսկ ԱԾԶ = 1207 թ. արդէն Հաղպատամին
է (**). Այս Յովհաննէսն է մեր աւետա-
րանի յիշտատկարանի նոյնանաւն սրբա-
ռէր իսկ ըստ Գանձակեցու «այր առա-
քինի» առաջնորդը, որի կիրայ կորկի է
իրաւամբ մնեծ շինուարք մականունն
աւելացնել. Ըրտգում գործու արժանի յիշտա-
տակաց գործեաց նաև ի Հաղպատ, ընդ որս
և կհաչակաւոր գաւիթն եկեղեցւոյն շին-
եաց, որ հիացուցանի զտեսողնեն (***);
Արդար' և, Հաղպատիք այս մնեծ և հոյակապ
գաւիթը հայ ճարտարապետութեան ամեն-
ափառաւոր կոթողներից մէկն է, իսկ զա-
րթինների ճարտարապետութեան մէջ առա-
ջնութ (պատկ. 11) (****); Նորա ժամանակի

(*) ԵՐԳՆԿԵՐԱՆ, 24:

(**) Բարիսուդարեան. Արցախ, Բագռ. 1895. 194: Զեռ. իջ. N 203: 194, 254ա:

(*) *Quint. 164, m. h. 92,*

ուր պատմութերն եւ, արարագապես սեւեան, դարարանիքի, արանանդաբական յշ լատակարանների, պատկերացանդակների, որմանկարչութեան թանգարակ է սա, կը կանանայի ապրել և շշաստել երկար, երկար ը, մինչ ո կարապահ մի ամքողակն զավախրա տալ այն զեւարուեստական փառաւոր անցեսվի մասն որի խորու ննացօրդներն ենք մենք այժմ, Միջոց են աղետ աշխատելու, լռաննկարելու, որ նաև կարապետան մասերը չափարելու և գծադրելու, արանագութիւնները նոյնահանութեամբ կորու որից գրենու, զարգացանդակների ժամանակա-

ուրիշ երեսյթների մասին չենք ուզում կանգ առնել, նիւթից շատ չհուանալու համար և նա թագուած է Գէորգ եպիսկոպոսի գերեզմանին կից և վերան իւր գեղարուեստասէր ճաշակի համապատասխան, ճարտարաքանդակ մի աւելի մեծ խաչարձան կանգնած, անկիւնածե ճակատին «Այս է հանգիստ տր. Յոհաննիսի գրուած (**)»:

Նորա յաջորդն էր Յովհաննէս Յ. իւր Աղբօրորդին, որ 1233 թուին շինեց Կայենոյ բերդը՝ տաճարի հետ միասին, և հրամա-

նորդների մէջ, որի կարեւը գործերն են երկարկանի զանգակատաւնը (պատկ. 12) ՈՂ.Դ = 1244 թուին և Համազասպ կոչուած «մեծ և սքանչելի», ժամատունը ԶԲ-92 = 1253-1257 թ. (պատկ. 13) (*): Վերջին թուականին մեաւ Համազասպը և նորան յաջորդեց Յովհաննէս Դ. Դոփեան՝ զիտու թեան, արուեստի, գանքի պայծառութեան մեծ աշխատաւորներից մէկը:

Այսպիսի գիրքի եւ զարգացման համընթաց էր եւ մատենագրութեան ու ձե-



(Պատկեր 11)

նաւ քեռոյն իմոյ իււանէի և որդոյ իւրօ Աւագին և Ծահնշանի որդոյ Զաքարէի» (**), իսկ սորա յաջորդ Յովհաննէս Գ-ի կարճատե և պիտիոպոսութիւնից յետոյ, որդի Աղասարթանայ, Կուրիկեան Բագրատունիներից, Տ. Համազասպ (1243-1257 ըստ արձանագրութիւնների) (***) , երկրորդ մեծ և գեղարուեստասէր անձը Հաղբատի առաջ-

դրութիւն կազմելու և սերտ ազերոս մանրանկարչութեան հետ ցուցադրելու, բայց ես իսկզ եմ, աղքատ, օրգական ժամաներս հոգալ չեմ կարող և մատաւմ եմ շուտ հեռանալ: Այսանդ պէտք է նստի մէկ երկու, երեք ամիս մասնագէտ աշխատակիցների երեսու:

(*) Համ. Երզնկեան, 64:

(**) Համ. Երզնկ. 72: (***) Գանձ. 93:


ապրական արուեստի զարգացումը Հաղբատում: Արևելեան Հայաստանի ԺԲ. զարի և ժԳ-ի առաջին կիսի նշանաւոր հեղինակների մեծագոյն մասը Հաղբատից են կամ Հաղբատի հետ կապուած. Յովհաննէս Ստրկատ զարդարեալ ընդարձակ և բազմապիսի գործունէութիւնը մատենագրական-գիտական-զարժապետական առարիգում այդ զարգացման բարձւունքներից մէկն է կազմում, նորա աշակերտներն են Երեմիս Անձրեիկ, Խաչատուր, Գրիգոր, Յովհաննէս և Սամուէլ Անեցիները (****),

(*) Գանձ. 93: Համեմ. արձ. Երզնկեան. 51, 38:

(**) Սամուէլ Անեցի. հրատ. էջմ. 128: Վարդան, Սոսկուս. 1861, 159:

առաջինը իբրև վարժապետ Անդում եւ երկրորդը յայտնի ժամանակագիրը՝ Նորա ժամանակակից վարդապետներն էին նոյն վանքում Դաւիթ Աղաւելյա որդի, ուր գրեաց զկանոնական որինազրութիւնս զեղեցկայարմարս և պիտանացուն ի ինզրոյ քահանայի միօն, որում անուն էր Արքայութիւն։ և Գրիգոր որդի Թոքակերի։ վերջին երկուոց թղթակցում են Գրիգորի Գ. Պահաւունու հետ^(*)։ ԺԲ. զարի վեր-

մակացողաց եւ ինքն էլ կազմել ՈՂԲ. = 1243 թուին^(*)։ Վարդանը Հազրատիցին է, Շնորհալու ժամանակակից՝ հեղինակ Պատճառաց գրքի, որ հասել է մեզ, նորա Տրացու եւ Յովսէփ աշակերտների արտազրութեամբ, ուսուցչի մահուանից յետոյ 1267 թուին^(**)։ Զգիտք է շփոթել սորան Վարդան պատմիչի հետ, որ սրանց կը բառաւեր ժամանակակիցն է։ Դաւիթ վարդապետը Քոբայրեցին է, վարձական հետ^(*)։ ԺԲ. զարի վեր-



(Պատկեր 12)

լին և ԺԿ-ի առաջին քառորդներին Հաղպատում նշանաւոր էին իշխանութուն և ուսմամբ հռչակեալը, Պետրոս, Վարդան և Դաւիթ վարդապետները^(*)։ Գուցէ նոյն մինի այս Պետրոս վարդապետի հետ ճեմք ոմն Պետրոս սպասաւոր որ, Նշանիս Հաղպատայ», որ օքաղձանաւոք սիրոյս Յովհաննէս կրօնաւոր քահանային գրել է տուել Դաւիթի սահմանաց գիրը և առըլ աշխատութիւնների, բայց նաև 22-ի ստացող. անձամբ արտագրել է Գրիգոր աստուածաբանի և ծնննանց քիւ, և Առ որս եւ «Յաղոզս Եւնոմիոսացն եւ այլոցն չար աղանդից» աշխատութիւնները եւ արտագրել տուել Կոչ Միխիթարի Երեմիայի մեկնութիւնը, ոչի անպարազ եղաւ իմայս անձին ի ժա-

Պատճառաց գրքի և ուրիշ աշխատութիւնների, բայց նաև 22-ի ստացող. անձամբ արտագրել է Գրիգոր աստուածաբանի և ծնննանց քիւ, և Առ որս եւ «Յաղոզս Եւնոմիոսացն եւ այլոցն չար աղանդից» աշխատութիւնները եւ արտագրել տուել Կոչ Միխիթարի Երեմիայի մեկնութիւնը, ոչի անպարազ եղաւ իմայս անձին ի ժա-

(*) Վարդան. 159. Գանձ. 107, 188.

(**) Հնդկ. էջմ. հրատ. 1865. 427 և Գանձ. 162,

(*) Զեռ. էջմ. N 1890/1747. 121 թ.

(**) Զեռ. էջմ. N 4139 (բերուած Տաթևից N 9) 516 թ.

մանել և գրոշմել զսա, այլ և այլում տղիս-
մարաց ետու գծել և պարզաւ ունիմ, թէ .
պէտ և ուղղեցի յիտոյց, վիշտում մի պատ-
մական կարեռը յիշատակարան աւելացնե-
լով. Օրբէլիանց ապատամբութեան մասին
ընդում Գէորգի III-ի (*): Սաղմասի մնկ-
նութեան հեղինակ Վարդանը գրել է «շար-
ժեալ ի հոգւոյն սրբոյ և յարհականէն
Հաղբատայ և յաշակերտաց իւրաց», ընդ-
օրինակութիւնը կատարուած դարձեալ
նոյն Տիրացու գրչի ձեռքով (**). զժուար
է մեզ ասել, թէ Հաղպատաի այս արհին Յով-

ուխտին Սանահնին», ինչպէս և Օձնեցւ
վկայաբանութիւնը (*): Իսկ Յովհաննէս Դ.
Դոփիեանը սրբագրել է Վարդանի հնագա-
մատեանի այս մեկնութիւնը, որ և Գէորգ
Սկեռացու աշակերտ Երեմիան 1296 թ.
ընդօրինակել տալով Աւշին գրչի ձեռքով,
բերում է և այդ օրինակի յիշատակարա-
նը. Այիշման բարոյ արժանաւորն և զմե-
ծապատիւ արհինեպիսկոպոսն մհծանչակ
սր. ուխտին Հաղբատայ զար. Յոհաննէս,
որ զաւընակս էր սրբագրեալ և զնորին
ձեռասուն զեղաւրորդին հարազա(ա) Սար-



(Պատկեր 13)

հաննէս առաջինն է, թէ Յովհաննէս Դ.
Դոփիեանը, որովհետեւ պարզուած չէ թէ
ո՞ր Վարդանն է հեղինակը. Արարածոց
մեկնութեան հեղինակ Վարդանը գրել է
իւր աշխատութիւնը ոի թվիս Զժ (= 1261)
ի խնդրոյ արհիական ան. Հաղպատապայ և
վարդապետին Գրիգորի փակակալին որ.

զիս քահանայ, որ ի վարժու կրթ(ութի.)
բանի է պարտպեալ, որ և չնորհաց իսկ
զաւընակս»(**):

ԴԱՐԵԴԻԻՆ ԱՐՔԵՊՈ. ՅՈՎԱԼԻՓԵԱՆ

(Չարունակելի)

(*) Զեռ. էլմ. N 163|260, 233ա. և N 913 նժ.: Թորթում արքեպիսկոպոսի Յուց. Սերասու. Սուրբ

Նշանի 22. N 153: Ֆերեզմանը Հաղբատումն է:
(**) Զեռ. էլմ. N 1204|1119:

(*) Զեռ. էլմ. N 1204|1119 և N 920 նժ.:

(**) Զեռ. էլմ. N 2604. 186ա.: Զեռք յիշում
նորա ընդարձակ գործունեութիւնն առ հասա-
բակ, ներկայ աշխատութեան լրջանից դար-
լինելով:

ՊԱՏՄԱ-ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ

ԽՍԱՑՈՒՄՆԵՐ

—

ԲԱՆԱՍԻՄՈՒԹԻՒՆԸ ԽՆՉ ՆԱՌԱՅՅՈՒԹԻՒՆ
ՄԱՏՈՒԹԱԾ Է ՊԱՏՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԵԱՆՑ

Լեզուներու բաղդատական գիտութիւնը ներկայ ժամանակի ուսումներէն է բոլորովին։ Հիները չունեն զայն, զի բաղդատելու համար գիտուալ պէտք է։ և հիները երենց լեզուէն զատ ուրիշ չէին ոտքիր։

Այս տեսակէտով առաջին գիտունը եղաւ կայրնից։ ընդարձակ և խոր միտք, որ առաջին անգամ տեսաւ զարմանալի ճշգութեամբ թէ պատմութիւնը ի՞նչ հետեւանքներ պիտի կրնար քաղզել բազզատական լեզուագիտութիւնէն։ ի՞նքն էր որ նկատեց գերմաններէնի և պարկերէնի նըմանութիւնը։ Թրանսացոց մէջ ալ թիւրկո եղաւ որ զիրթէ առաջին անգամ ընդունարեց այսպիս գիտութիւնը մը բաղունելիք մէծ օգուտները։

Բայց համեմատական լեզուագիտութեան հիմք դրուեցաւ սանսկրիտի գիւտէն ետքը։

Կաթոլիկ միսիոնարներն էին որ առաջին անգամ նշմարեցին այս բարբառին գոյութիւնը, անոր նոխութիւնը և յունաբէնի ու լատիներէնի հետ ունեցած յարաբերութիւնները։ բայց այսչափ միայն։ Կալկաթայի գիտուական անգղիացիներու ընկերութիւնան վերապահուած էր այս թանկագիրներն լեզուին ամբողջ տեսաբանութիւնը կազմելու պատիւը։ ասոնց մէջ ամենէն նըշշանաւորն էր William Jones, յետոյ աւելի յառաջացուց այդ ուսումը Frédéric Schlegel-ը լի զերջոյ, ամենէն աւելի Bopp գերմանացին էր որ կատարեալազործեց ուսումնասիրութիւնը, բոլորովին գիտական մերուտով մը հաստատելով սանսկրիտն յարաբերութիւնը յունաբէնի, պարսկերէնի, լատիներէնի և գերմանական լեզուներու հետ։ ի զոր կարծուեցաւ պահ մը թէ Պօրի տեսաւթիւններուն մէջ բոլորովին կամայական վարկածներ կան, եւ թէ անիկա երեւակայօրէն ամէն բան կ'ուզէ ծընդունել սանսկրիտէն, ինչպէս կին լեզուա-

բանները կ'ուզէին հանել երբայիցերէնէն։

Պօրի և իր զործը շարունակողներուն մեթուը զերծ է այդ հնարածոյ կերպերէն։ ան իրապէս կը համեմատէ։ իր մերձեցումները կը յօրինէ ստոյգ տուեաններու վրայաց, զուգահեռաբար ի խոնարհէ բայց յաւնարէնի և սանսկրիտի մէջ եւ կը հաստատէ բացարձակ նոյնութիւնը, եւ տարբերութիւնները եթէ կան, կը բացարձակ զանոնք։ Պօրի մեթուին ամենէն հաստատուն յատկանչը ձայնաբանութիւնն է։

առաջ պատահական նմանութիւններէ կը տարուէին լեզուաբանները։ հիմակ ուրիշ կանոններ կան, ճշգրտուած է թէ սանսկրիտի այսինչ ձայնը (ներ զոր օր) յունարէնի այսինչ ձայնին (= φ) կը համապատասխանէ։ ու այսպէս կը կազմուի ձայնաբանական աստիճանացոյց մը կամ աղիւսակ մը։

Հին ստուգաբանները պչչի և ականչի նմանութիւններու կը նայէին։ sauage ը solivagusէն կը հանէին, մինչդու silvaticusէն կուգայ ան։ Ոչ թէ ձեկի՝ այլ ձայնի կերպափոխութեան օրէնքն է որ կը բացարձակ լեզուներու յարաբերութեան զաղանիքը։ և այդ օրէնքն է որ կատարիլապէս երեան հանեց Պօր։ Սանսկրիտին, յունարէնին և լատիներէնին միեւնոյն ընտանիքն ըլլալը հաստաբելէ զերջ, նոյն խումբին մէջ մտցու նաև զենտերէնը եւ պարսկերէնը։ Այս զերջին գիտսին կնիքը զրաւ Եսցուե Burnouf, որ սանսկրիտով վերակազմեց զենտերէնը՝ զոր մոոցած էին պարսկերէնը։ նոյն մեթուին զործազրութիւնը կետզէնտէ ընդարձակուեցաւ, եւ կեղծական լեզուներն ալ խմբուեցան հնգեւրոպական տիպորին տակ։

Բոլորովին տարբեր խումբ մը երեւան եկաւ, նոյն օրէնքին լրացով, երբայցերէնին հետ, բառաբանով եւ գերականութեամբ խորապէս տարբեր միւսէն, այնքան որքան փիզէն կը տարբերի նոյնի որդը իր զործաբանուորութեամբ։ Երբայցերէնին քոյր են նախի արաբերէնը, յետոյ աստրերէնը, ևն, որոնք իրարու շատ աւելի մօտ են, որչափ չեն հնգեւրոպական արմատէն ծնած միւս լեզուները։ Դաւ-էթ, եթէ յանկարծ յարութիւն առնէր այսօր, պիտի կրնար խօսակցիլ Ապարանի Քառէրի հետ։ Ամերիկացի միտիոնարները կըցին երբայցերէն սորվեցնէլ մէծ զիւ-

«ԷՄԻՐԻԱՆԵԱՆ» ԿՏԱԿԻ ԽՆԴԻՐԸ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Մատրանի (Հնդկաստան) Հայոց Հոգեւոր Հովիլ Արք. Տ. Տրդատ Քնյ. Յովակիմիան (St. Mary's Armenian Church. 1. Armenian Street. Madras) ուղղած է Ս.մին. Ա. Պատրիարք Հօր 27 Յուլիս 1935 թուակիր գրութիւնը վերոգրեալ հարցի վերաբերեալ :

«Պատիւ ունիմ խոնարհաբար յայտնելու Ամենապատութեանդ որ հետզինեւ սացած եմ Եգիպտոսի, Պոլսի, Միջիայի և Նոր-Զուրայի ազգայիններից — որոնք որ իրենց համարում են ԱՄԵՐԻԿԱՆԵԱՆ ժառանգորդներ — համակներ եւ հեռագիրներ. տեղեկութիւն կը հարցնեն ԱՄԵՐԻԿԱՆԵԱՆ կտակի եւ հարստութեան մասին :

Նուաստ 1926 թուից սկսեալ առաջին եւ երկրորդ անգամ տեղու վիճակաւորութեան ժամանակ, հետզինեւ ժառանգորդ եւ փաստաբան եկած են տեղու. վերոյիշեալ կտակի մասին պրագտումներ են կատարած դատաստանատուն, եւ բանքային հաստատութիւն, եկեղեցի եւ գերեզմանատուն, գիւղ ու գաւառ:

Այս անուամբ կտակ ու հարստութիւն բնաւ գոյութիւն չէ ունեցած. անմիտրար վերադարձել են, զինի բաւականաչափ դրամ ծախսելուց :

(Արժանապահի հոտակայիրը հու կը յիշէ կիրամանեն զացած հայ փատարան մը. ինչպիս նաև Ճեղիկ երկու տեղացի փատարաններ՝ որոնք Պուրոյ փատարան մը կը հերկայացրնեն, ու անոնց հաւաք կ'ըսէք.)

«Ներկայացան դատաւորի Ասեան ներկայ տարւոյս 14 Մարտի :

Դատաւորը տեսնելով որ երկու հակառակորդ փատարանների ձեռքում ոչ մի օրինաւոր փաստ չկայ, ասել էր՝ խնդիրը փակուած են համարում.

Տեղացի փատարանները նոյն օրը դատաւորից նինդրել էին որ իրենց ժամանակ տայ, կտակը եւ հարստութիւնը ցոյց կտան:

Նա ժամանակ էր տուել մինչ ներկայ ամսոյս 23ը. նորից նոյն օրը ներկայացան. դարձեալ ոչ մի փաստ :

Ներկայիս, երեք փատարաններ կան տեղու եւ երեսն էլ իրար հակառակ ժառանգորդներ ունեն :

Ցաւում եմ որ զուր տեղը մեր ազգայինները դրամ են վասնում:

Մեր ազգայինների այս վճարը տեսնելով, Մերազնութենէդ կը խնդրեն եքէ կարելի է, ՄԻՌՆ ամսագրի կամ այլ թերթում նուասիս անուամբ յայտարարուի որ Մատրաս քաղաքում և շրջանում Ամիրիանեան անուամբ վաճառական եկած չէ. ու ոչ կտակ ու հարստութիւն թողած. զուր տեղը ժամանակ շինեն ։

Կը խնդրուի Պատ. Հայ Թերթեր՝ Անրիայս հրատակել նոյնութեամբ։

րութեամբ՝ Վահայ ծովի մօտերը բնակող ասորիներուն։ Կը հաստատուի թէ հնդեւրապական և սեմական լեզուախումբերը բարորպին ուրին ստեղծուածք ունին։

Սփրիկէի մէջ ալ կան խումբ մը լեզուներ, ինչպէս պէրպէրէրէնը, քապիկրէնը, և գեռ ուրիշներ, որոնց հատ թերես նաև խառնիքնը, որոնք ոչ մէկ ազերս չունին միւս երկու խումբին հատ ալ։ Այսպէս է նաև պասպէրէնը։

Բազմաթիւ են լեզուները, որոնք կը խօսուին երկիր վրայ. բայց կարիքի պիտի ըլլոյ զանոնք ամենքը վիրածել որոշ խըմբումներու, ընտանիքներու, որոնք, հաւանաբար, առ առաւելին քսանեակ մը պիտի ըլլան։

Ի՞նչ է լեզուական այս նմանութիւններուն պատճառը։ Կարիքի չէ անշուշտ ընդգունիլ հին վարկածը (զոր Պղատոն ևս պաշտպանած է) թէ բառը տեսակ մը անհրաժեշտութեան ձնունգ է. այսինքն եթէ առարկայ մը անուն մը ունի, ատոր պատճառն այն է որ ներքին շարժառիթ մը կայ անոր այզպէս կոչուելուն։ Եթէ այս տեսութիւնը նիշէ ըլլար, բնուա անուններու այսինքն բառերու զանոզանութիւնը պիտի չըլլար. հայրը հնդեւրապականներուն մէջ թար և սեմականին մէջ ան պիտի չըսուեք։ Կարիքի չէ նոյնպէս բոլորովին կանզ առնել փոխառութեամբ կարածին ասջեւ. փոխառութեամբ կրնան բացատրուիլ այն բառերը, որոնց ներկայացուցած իրեր փախութեան տառկայ եղած են։ Այսպէս, հնդկերութական լեզուներուն մէջ, բոյրերու, գոյներու, համերու բառերուն մէջ շատ կան սեմական ծագում ունեցող բառեր, վանզի անոնք ամենէն աւելի Փիւնիկէն արտածուած են։ Քարձեալ կան դասակարգ մը բառական նմանութիւններ, որոնք քաղաքական կամ լնկերային երեւոյթներով միայն կրնան հաւակուիլ, ինչպէս անզիներէնին մէջ եղած ֆրանսերէն բառերը, որոնք պրըսն նուռառումին գործն են, կամ թրքերէնին մէջ եղած արաբերէն և պարսկերէն բազմաթիւ բառերը, որոնք պարական քմանաւութեանց գործ են պարզաւու։ Փօխառութեան երեսյթը կը բացատրուի լեզուներուն պատմութեամբը, և ոչ թէ գիտութեամբը։ Լիզուական նմանութիւններուն պատճառը առաջ է առաջաւութիւն առանց պէտք է եղած ըլլայ այդ լեզուները խսող ներկայ բոլոր պազիերուն լեզուական նախնիքը։

Երկրագունդի վրայ խօսուած լեզուներուն անվիերածելի խմբումներու արանուելիքն պէտք չէ սակայն նախնական բաժանում հնատեցնել մարդկային տեսակի. լեզուաբանական երեսյթէն պէտք չէ մարդաբանական երեսյթ երակացնել։ Այսինքն պէտք չէ հսու հարց զննենք թէ ուրիմի մարդկային տեսակը մէկ թէ տեսելի երեսումներ է ունեցած։ Բանասիրութիւնը այդ մասին չի կրնար մեզի ոչինչ ըսել. անկիս մեզի կ'ըսէ միայն թէ լեզուն զանազան տեղեր երեցած է և բաւական մեծ թուով։ Բայց ուրիշ է մարդկային լեզուներուն ընտանիքներու պարագան եւ ուրիշ մարդկային լեզուի պարագան։ Մարդկայիւնը առանց լեզուի եղած չէ երեք, բայց մինչեւ լեզուներու ընտանիքներ՝ այ-

սինքն հնդկոպական և սիմակոն եւայլն կազմակերպեալ լեզուներու խմբումներ ձեւանալը անցած են երկարժամանակեայ տեսլողաթիւնները։ Լեզուները երկար դարեր մնացած են անկողմ վիճակի մէջ, նման սվկիանեան լեզուներուն, որոնք ինչպէս միսիանորները հաստատած են, անհռուկընալիք լլազու չափ բառզբոյշինին կը փոխնե։ Մարդիկ միշտ խօսած են անշոշշատ, իրարու հասկցնելով իրենց կարգիները, բառերը բարաւական եղած ատեն՝ ծայսի շշտումներով և շրածուածքի պէտուութիւններով, բայց քիրակնառութիւնները յետոյ է որ յօրինուած է հնտզկեատ։ Հընդեւրոպական, անսնկիրս, պէտպէտ և ալթայիկ քերականութիւնները հին են անշոշշատ, բայց ամէնքն ալ վերջապէս զոյ եղած են թուականէ մը ատեն։ Անսնկիրսը առնըւազն 3000 տարուան հունաթիւն պէտք է ունեցած լլազայ. աւելի հին պէտք է եղած ըլլան Բարեկոնի և Զէնա ինչպէս նաև եզիպատոսի լեզուները. յամնայն դէպս են գիպատերէնու այդ երկրին հնազոյն յիշակերտներուն շինուելին քիչ առաջ չէ որ պէտք է կոզմակերպուած լիկու մը եղած լլազայ. բայց ասոնց քերականութիւնները երենակէն շատ առաջ, անհռուսելի գարերով առաջ, պէտք է լեզուները խօսուածք լլազան, անկատար քիրականական ձեւերով, հնտզկեստ իրարու խառնուաելրգ և իրարու վրայ ազդեցուու։

Նախական որրաններ եղած են ուրիմ, որոնց մէջ կազմուած են լեզուներու ընտանիքները։ Արիականներու հինաւուրց պատիկ խումբին մէջ, ուր եղած են անշոշշատ երկայնքուիններ, կարճագլուխներ, գորշեր, կապյատաչներ, ու թիւես ճերմակներ և սևեր, նաև ապեստական իշխանութիւննը պարտադրած է լեզուն օրէնքը, ու այդ պատիկ լնկերութիւններուն մէջ, ուր անշոշշատ օտարացած գերիներ ալ կային, խօսած են նոյն լեզուն, ամէնքն ալ, աւելի կամ նուուր յաջողութեամբ մինքան գիրւաց։ Այսպէս, լեզուաբանական երեսյթը յարաբերութիւն չունի, գրեթէ ընաւ, մարդաբանական երեսյթին հետ։ առաջինը չափով մը արդւեստական է, երկրորդը՝ բարորուգին բնական։ Հաս այսմ, լեզուաբանական ցեղեր կան, եթէ ներելի է պահ մը այսպիսի բացատրութիւն մը

զործածել (այսինքն նոյն լեզուն խօսդները) և մարգարանական ցեղեր։ Կարիքից է ճանչնալ լեզուարանական ցեղերը։ Կը բառնեք, զոր օրինակ, ըստի թէ այսինչ ազգը, որ հնդեւրոպական լեզու կը խօսի, հնդեւրոպական ցեղ մըն է որոց աստիճանով մը։ Ֆրանսեւրէնը լատիներէնին ուսմկօրէնն է. ուրեմն, կերպով մը, ֆրանսացիք լատիներէն կը խօսնի այսօր, բայց անոնց նախնական չէնին խօսեր բնաւ, այլ կոլուսերէն։ Քրիստոնէ ծծ տարի տառած էր որ, եթք Եպուական կեսար նուածեց Կոլուան, Հռովմէական կայսրութիւնը վարչական միջոցներով և զինուորական ծառայութեամբ հարկադրեց լատիներէնը, որ մոռցուց կոլուսերէնը։ Ահա օրինակ մը որ կը ցուցնէ թէ պատմական զեպքեր յաճախ կը խանգարեն լեզուարանական վիճակներ։ Նոյնը պատահած է Նեղպատում մէջ, որ ինքնին արաբական երկիր մը չէ բնաւ, բայց արաբներւն տիրուպետութիւնը բալորսվին արաբներէն լեզուին ենթարկած է զայն, այնպէս որ այժմ հոս բուռ մը խափի միայն կը տեսահնաք, անսնգ ալ արգէն շատոնց մոռցաց լիբենց լեզուն։ Այսպիսին ներգործութիւն կատարած ազգակներն ունեց ամենէն նշանաւորներն եղած. են Հռովմէական կայսրութիւնը և Խալամակնութիւնը, որոնց իրենց ծաւալած ազգեցութեամբը այլայլած են աշխարհի լեզուարանական պատմութիւնը. առաջինը լատիներէնը ընդհանրացնելով, երկրորդն ալ արաբներէնը։ Պուտառյականութիւնը այս տեսակէտով մնձ յեղափոխութիւն մը չէ ըրած, բայց վերջապէս բալորսվին ալ անազդիցիկ չէ եղած։ Յունական քաղաքակրթութիւնն ալ, իր նուանողական ծաւալումովը լեզուարանական օրէնքին վրայ կարեւոր այլայլում մը յառաջ բերած է։ Նոյնպէս եղած էնակ Զինաստունի և Հինտուականութեան առնչութիւնը. այս ամենէն կը հասկցուի թէ լեզուի հասարակորդութիւնը վաստ չէ բնաւ ծավալու հասարակորդութեան։ Կորեիլ չէ ընդունիլ, ինչպէս սմանք կը թափն ուրուիլ, թէ թերեւ կոլուսերէնն ալ, որ հնդեւրոպական լեզու մը եղած է, մինչեւ արևմտաքի խորեց հասան ըլլաց հռովմէական կայսրութեան նման ազգեցութեամբ մը։ Ոչ. պատմութեան մէջ այդ ուղղութեամբ կատարած ենենութեան մը

որ և է նշան մը չկայ թեաւ . և անկարելի է որ այդքան նշանաւոր իրողութիւն մը իր հեացը ձգած զըլլար երբեք : Դժուար է որ Հսովմէական կայսրութեան , իսլամականութեան , Մէծն Ազիքսանզղի կայսրութեան և յունական քաղաքակրթութեան ծաւալման նման դէպքեր տեղի ունեցած ըլլան պատմական ժամանակներէն առաջ , գլխաւորաբար այն պատճառով որ մէծ խօրհրդածութեան դէպքեր չեն կրնար կատարուի առանց գիրի , վասնզի զիրն է որ կ'ենթագրէ խօրհրդածութիւն , և առանց գիրին օգնութեանը չեն կրնար կատարուի այդպիսի իրողութիւններ : Տարակոյս չկայ թէ մէծ և հիանալի բաներ կորուած են ժողովուրդներու կեանքէն , մանաւանդ այն ժողովուրդներուն , որոնք կերպվնկալ արուեստ չունէին և յիշատակարաններ չէին կանգներ , և մազ մնացած էր որ ամբողջ երրայտական գրականութիւնը կորուած ըլլար այսօր մարգկութեան համար , և պիտի ըլլար արդարեան , եթէ Անսինքոս Եփիքան քիչ մը աւելի դիմացած ըլլար . վասնզի տանեն մը եղած էր երրայտական հրաշակերները մէկ կամ երկու ձեռքից ներու մէջ միայն կ'ապրէին : Բայց անկարելի է որ հոգովմէական կայսրութեան և իսլամութեան նման դէպքեր բոլորովին անհետ մնացած ըլլան . Այս գողակարը կը հաստատուի Հինտաւններուն ննդկաչիւնը և ձագաննուանելու դէպովիլ . Ոչ մէկ զիրք կը խօսի այդ մատին , և պատմութիւնը բոլորովին պիտի ոնդիտանար զայն , եթէ այդ միջոցին գրաւորուած կամ կոչուած ժողովդային լեզուն և յիշատակարաններ չի հաստատէին զայն : Ահա իրողութիւնը մը , որոնք պատմական աւանդութիւնը կորպւած է մեզի համար , բայց զան մեզի կը յիշեցնեն հնախօսութիւնը և լիզուն :

Հնդիրոպական լիզուն ստուար խումբերու միջոցաւ պէտք է տարածուած ըլլայ կորուայի մէջ : Նուռանամեներ կան որ կը նպաստին լիզուներու փոփոխութեան , նուռանումեներ այ հան , որոնք չեն նպաստեր : Եթէ նուռանական լիզուներին կը փոխուի : գերմանական նուռանումեները լիզուն կիրայի կրցիս փոփոխիլ , որովհետ կիրայի չկային իրենց բանակներուն մէջ : Նորմաններուն Մէծ գետին բերանը հաստատուելէն սերունդ մը ետքը սկանավորներէն բառ մը չէր մնացած , որովհետեւ նուռանումեներու զաւակներուն ըստնուուները նէքստարուէին էին . իսկ կը

նոյ դիրը մեծ է լիզուի տարածման գործին մէջ :

Բաղդատական բանասիրութեան գործը է բարոյական դիցարանութիւնը : Հնդիրոպական միութիւնը ոչ միայն լիզուաբանական այլ նաև դիցարանական միութիւն մըն է , այսինքն ինչպէս կայ հնդիրոպական լիզու մը , նոյնպէս նաև կայ հնդիրոպական դիցարանութիւն մը : Դիցարանութիւնը լիզուն է ինքնին . անկէց կ'ելէ ան , և ուրիշ բան չէ բայց եթէ նիւթականացած լիզուն ինքնին : Բաղդատական դիցարանութեան զոյգ կ'ենթանայ նաև կին անգիր սավորոյթներու և օրէնքներու բաղդատական գիտութիւնը : Ասանց միջոցաւ է որ կը յանդինք թափանցի հին ընտանիքներուն և այսպէս ըմբռնել տեղը : Որ ամէն ինչ էր ի սկզբան Դիցարանութիւնը . յիտոյ կուզայ բնապանցութիւնը , որ կը կերպովը դիցարանութիւն մըն է , մինչոյն սկզբունքն ծագած : Մինչոյն մտքի վերջին օդակն է դրական գիտութիւնը , իսկ այս ամէնը կախում ունին լիզուէն և նախնեաց կարգապահութիւննեն :

Հաս ոմանց ցիզն ու լիզուն խարիսխն են նաեւ քաղաքականութեան , այսինքն ազգութեան կացուցիչ տարրը : Այսպէս չէ սակայն . ազգութեան հիմք հոգին է միայն . լիզուն , ցիզն , աշխարհագրութեանքն , կրօններու , ծէսերու , հարաբերութիւններու այյի տարարոշումներն լիզուրը ու զիրք բան մը կայ ազգութեան մէջ , անհամար այսինքն բարոյական էակին յարգանքը և միասին ապրելու կամքն է ան : Օրինակ Զններան , Աստուած զիտէ թէ ո՛ր քան ցեղեր կան , բայց ուր պազութեան և հայրենիքի զաղակարը հասած է ըմբռնումի բարձրագոյն աստիճանի մը : Խզութիւնը հոգի մը , ոգի մըն է , հոգեկան ընտանիք հմէն է , որ յառաջ կուզայ՝ անցնանի հմէն համար , հուարակոց յիշատակներէ և փառքիրէ և սուգերէ , իսկ ներկային համար՝ բնակչութեանց համամտութենէ : Լիզուն չէ որ կը չինէ զայն , այլ անցիալին մէջ միասին մեծ բաներ ըրած ըլլալու և ապագային մէջ ընկու զգացումը :

Մարդ իր լիզուին և ցեղին պատկանելէ առաջ կը պատկանի ինքսինքին , իւ մէջ զոյ բարոյական էակին , վասնզի ամէն բանէ առաջ աղատ և բարյական էակ մըն է :

Կ. Բ.

ՆՈՐ ԶԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ
Ա. ԱՅՐՈՂՅԱ ՀՈՎԱՆԻՉՅԱՆ ՏԱԿ

Վարդավառի կիբակին (Օգոստ. 4) և Նախընթաց երկու օրերու ընթացքին, շուրաթապահոց Ալբրաթի և Տաղանակի տօնի Նարաթ օրը, Ա. Պատրիարք Հօր Նորդարչաբարեմ՝ Սրբաց Յակոբանց Մայր Տաճարին մէջ անզի ունեցան ձեռնադրութիւններ ութ գափիներու, հինգ սարկաւագիներու և երկու քահանայ արեգաներու, ումէնքն ալ խարսավիլութեամբ կուսարարապես Տ. Մեսոր Սրբազնի:

Դպիրները, ժառանգաւորաց Ա. Բ. և Գ. զառարաններէն անոնք էին, որոնք նախընթարիններու ձեռնադրութիւններէ վերջ ընդունուած մինելով՝ տակաւին չէին ստացած գդերիկուութեան չորս աստիճանները, Անոնց ձեռնադրութիւնը տեղի ունեցաւ Օգոստ. 2ի Ալբրաթ երեկոյին:

Հինգ սարկաւագները շրջանաւարտներէն էին ժառանգաւորաց բաժինի վերջին զառարանին: Այլ զառարանի սաներան թիւը վերջին տարին յանդամէ Էր ութիւնուցմէ մին միայն, թէև ուսումնապէս յառաջակէմ և ուրիշ տեսակէտով ևս հոգերականութեան յարմար, չէր յանձն առած կուսակրօնութեան չէր:

Մնացեալ Խօթէն երկուրու ևս (մին թէև փոլյուն ուսանող՝ զրականութեան մէջ մանաւանդ) մասնաւորապէս ասողջական պատճառներով Տնօրէն ժողովէն անյարմար զառաւած ըլլալով հոգերական ասպարէզի, սարկաւագութեան աստիճանի բարձրացուեցան միայն մեացեալ հինգը, որոնք են. Անգրանիկ Տօնիկեան, Քրիստով, Դահիրէն եկած. Արեգ Բաբուրեան, Զուզացի, Պաղտատէն եկած. Արմենակ Ռոկերէնեան, Երզնկացի, Դահիրէն եկած. Խաչիկ Մանուէլեան, Այնթապցի, Հալէպէն եկած. Ազատ Երէցեան, Էվդրէկցի, Դահիրէն եկած:

Հինգն ալ, ընդհանուր առմամբ, յաջողութեամբ աւարտած ըլլալով ժառանգաւորացի քառամահյա ընթացքը, և վարուց և բարուց տեսակէտով, այսինքն իրենց հոգեսիրութեամբ ևս, արժանաւոր նկատուած մինելով կրօնական կեանքի, Ալբրաթ երեկոյին ձեռնադրութենց ընդունեցին կիսասարկաւագութեան, և Շաքար

առաւատուուն, ի ժամ Ա. Պատարագի, աւագ սարկաւագութեան:

Ձեռնադրութեան աւարտումէն վերջ, Սրբազն Պատրիարքը յորդորական ուղերձ մ'ըրաւ աննաց՝ թեմին վրայ, հրապարակու: Յիշեցնելով իրենց թէ Տապանակի տօնին օրին է որ կը կոչուին Եկեղեցւոյ ծառայութեան, յանձնարարեց միշտ զգացումով անդրագառնալ իրենց ձեռնադրութեան այդ օրուան հանգիպելուն խորհուրդին: Հաւա թէ քրիստոնէութեան մէջ կը տօնինք իրն ուխալ տապանակը, իրեն խորհրդանշանը նոր ուխտի տապանակին, որ է Եկեղեցին: Ցոյց տաւաւ թէ կրնին և նորին տարբերութիւնը այն է որ տառջինը նիւթը և ծէօր, իսկ երկրորդը զարդարար կոմք խորհրդաց կը ներկայացնէին: այնպէս որ կրնին Ասկի բարգավար նորին մէջ բարեկաշառութեան հոգին է: Հինին կտակարանաց տախտակները նորին մէջ կենանի խօսիքին պաշամաւնքն է, հինին մանակայով մեսափորը նորին մէջ ասաւածային նախարարնութեան հուսաւոքն է: Հինին ծաղկեալ զուազանը նորին մէջ հովաւական բարոյականին սկզբունքն է: Ու իրենք այդ օրունէն կը մանին այն տապարէկին մէջ, ուր մինչև իրենց կեանքին վերջին որը պիտի ծառային այդ հոգիին, այդ պաշտամունքին, այդ հաւատագին, և այդ սկզբունքին: Հրաւիրեց զիրենք՝ իրենց աշակերտութեան յաջորդ երեք տարիները նույիբել իրենց մէջ աւելի ևս մշակելու այդ ծառայութեան ընդունակութիւնը:

Շաբաթ երեկոյին, Վարդավառի կիրակամուտքի արարողութիւններէն և ըստ տեղական աւանդութեան պատշաճից՝ Դուռթի մարգարէի և Յակոբայ Տեառնեղօրը յիշատակին նույիբուած օրներգներէն վերջ, նախօրդ տարիներու ձեռնադրութեանց համանակ հանգիպարութեամբ աեղի ունեցաւ շրջանաւարտ սարկաւագներու քահանայութեան հոչման արարողութիւնը:

Այս զասարանը թէև երեց սարկաւագներ կը բաղկանար, բայց, Տնօրէն Ժողովոյ որոշմամբ, երկու քին միայն եղաւ կոչումը. որոշման տեսակէտե երրարդը, թէև երկու քին զասակից երկու տարիներէ ի վեր, զես տարի մը առաջ ձեռնադրութեամբ ասրկաւագ. ու միամեայ սարկաւագութիւնը բաւարար պաւական չէր նկատուած հոգեւոր

իշխանութենէն՝ քահանայական աստիճանի արժանակաց խելամտութեան համար:

Էնգուսնուած երկութն էին Արշակ Մրկ. Պաղպատեան, Կնարիոյ Եյտէ քաղաքէն, և Յարտիրին Մրկ. Հատիկան, Այնթապցի. որոնք յաջորդ օրը, Վարդավառի Կիրակի առաւուուն, Խորբ Պատարագի միջօցին, Սրբազն Պատրիարք Հօրմէն ստացան քահանայութեան աստիճան, իսկ երեկօյին՝ արկայական իղուար:

Թէ՛ առաւուեան խորհուրդը և թէ՛ երկոյիան օրնաւ թիւնը կատարուեցան սրապարաւ վեհութեամբ: Եկեղեցին միքն էր հաւատացեալներու բաղմութեամբ. երկեցողութիւնները եղան ողերուեալ ներդաշնակութեամբ. ձեռնադրութ Սրբազնը, որ նոյն ատեն պատարագիչն էր, զգածուած սրտիւ կատարեց ամբողջ չնորհարաշխութիւնը. Օծման նուիրական վայրկենին, Արշակ Մրկ. վերաձայնաւցաւ Տիր Շնորհի խանանյ, իսկ Յարութիւն Սրկ.՝ Տիր Արդուն խանանյ: Այս անուններէն առաջին ժողովրդականացած ձեն է Շնորհաւմին. իսկ երկրորդը՝ որ հայեցի թարգմանութիւնն է Գրիգոր անուան, ոչ միտյն՝ իբր այդ՝ կայ շարականին մէջ (= «Գրիգորիոս անուն Արթուր»), այլ նաև իրապէս զործածուած է իբր յառուկ անուն: ԺԶ. գարուն, Լեհաստանի Լէսոպիլս քաղաքին մէջ գտնուած բարորդի ձեռուարի մը զրիչն է Տ. Արթուր քահանայ:

Ձեռնադրութեան և Օծումի խորհուրդին կատարումէն փիջ, երբ նորընծայք քահանայական զգեստաւուրումով և սպաւարտի գլուխ կեցած էին ինմին վրայ, Սրբազն Պատրիարք Հայրը խօսեցաւ օրուան քարոզը, ընաբան առնելով օրուան աւետարանի ընթիրուածէն: «Խօսէին զելիցն՝ որ կատարելոց էր յերուսաղէմ» խօսքը. ըստ թէ Թարոր փառքի բեմ մը ըլլալէ տեկի՝ կոչումի յուշավայր մը եղաւ մեր Փրկչին համար: Հոն Անիկա այլակերպացաւ, ոչ թէ իր զգեցած ակնախատիզ շքեղութեամբը հրացումի հարկադրելու համար իր աշակերտները, այլ անոնց հասկցնելու համար մտնաւանդ թէ ինքիլնքնին Աստուծուծոյ նուիրած մարդիկ՝ իրենց կեանքի ամենէն երանաւէտ վայրկեաններուն մէջ իսկ պէտք չէ մոռնան թէ իրենց պարտականութիւնն է սիրոյ, արդարութեան և նըշ-

մարտութեան համար տաժանքն ու մոռնու չափ տանջանքը: Պայծառակերպաւթեան լիուր սուրբ բարձունք մը եղաւ Անոր համար, որովհետեւ անկէ կրցաւ տեսնել Կողկոթան, որուն վրայ պիտի մատուցանէր Անիկա օր մը Փրկութեան պատարգութ: Քրիստոսի աշակերտները պէտք է նմանին Անոր: Յետոյ, խօսքը ուղղեալ ձեռնադրախներուն, ըստ թէ այն Բեմը, ուր անոնք այսոր ստացան Սուրբ Հոգուոն օծումը, իրենց համար Թարոր մըն է. բայց իրենց այդ բարձունքին վրայ իրենք այն ատեն միտյն կը պայծառակերպուին հոգուով, երբ անոր վրայ ոչ թէ ապագայ փառքի և մեծութեանց երազնիրէ տարուին, այլ իրենց աշքին առջև այժմէն պարզուած տինանն հնուանկարը այն տառապանքներուն, որոնք հոգեսորական տապարէզին ամենէն անսոււտ բաժինն են: Յօրգորեց որ այդ օրէն սկսեալ նուիրումի և զահողութեան ոգին խօսի միշտ իրենց մէջ, զի այդ է անկամածէտ, որպէսզի եկեղեցականը կարենայ լսել իր կոչումը, և իրականացնել զայն:

Նորին Ամենապատուութիւնն նոյն ոգուով յօրգորական կարճ ուղերձ մը ըրտ անոնց, իրիկունը, վեղալիք օրհնութեան պահուն, և յետոյ վանքին ընդհանուր սեղանատան մէջ, Միաբանութեան, պաշտօնէութեան և աշակերտութեան մասնակցութեամբ կատարուած հանդիսաւոր ընթիրքին, ուր ի վերջոյ ամէնքն ի միասին երկեցին Ս. Աթոռոյ օրհներզը:

Տ. Շնորք և Տ. Արթուր Արեգաններ, երկուքն ալ իրենց կհանքի 22րդ գարունին մէջ են այժմ: Առաջինը Պատերազմի և տարապըսթեան արհաւիրքն ու զժրախառութիւնները ամենէն անողոք սոստկութեամբ կրեէ վերջ իր պատանեկութեան օրերուն, եօթը տարեկան հոսակին ընդունուած է կհսարիոյ թալասի Ամերիկան որբանցը, և յաջորդ եօթը տարիներու ընթացքին հետոցինետէ պատսպարտեկի եւ աշակերտեկի վերջ նահր իպահնիմի: Արդունի մօտ Հիլ Թափի և ի վերջոյ նազարէթի Ամերիկեան որբանցներուն մէջ, 1927 ին ընդունուած է Ս. Աթոռոյ ժառանգաւորացը: Իսկ երկրորդը, մինչեւ 1918 իր ծնողաց հետ Հաւարանի անսպատին մէջ թափառեկ վերջ, հայրենիք զառ-

նալով մինչեւ 1923 կը հետեւ Այնթապի վարդանեան վարժարանին. յետոյ, երբ Ֆրանսացիք կը քաշւէին այդ մարզէն, իւրայնոց հետ գաղթելով Հալէպ, կը յաճախէ նոյն քաղաքին Դամասկոս, յետոյ Կրթասիրաց վարժարանները, ու, այս վերջինէն շրջանաւարտ, 1929ին կը մտնէ Ս. Աթոռոյ Ժառանգաւորոց, ուր անմիջապէս կ'ընդունուի Բ. զասարանը: Երեք տարի վերջ, իր ակներեւ յառաջդիմութեան շնորհիւ բացառարար կը փոխադրուի Սարկասպներու դասարանը: — Այնուհետև, երկու քն ի միասին, կը լինին

մեր վարժարանին տիպար աշակերտներէն, իրենց աշխատասիրութեամբը, ուստումահանդակ վարդապուտովը, բարի վարժովը և կարգապահ և օրինասէր ընթացքով:

Իրենց հոգեոր ծնողին, բոլոր ուսուցիչներուն և Տեսչութեան, ինչպէս և բազակ Միաբանութեան համազումն է թէ Ասուուծոյ և Ազգին իրկու արժանաւոր պաշտօնանիր է որ աւելցած են Ս. Աթոռոյոց հովանուոյն տակ. ու ամէնուն իշխն ու մտղթանքն է որ անոնք ման միշտ ի նոյն, անսայթաք և արդիւնալից կեանքով:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԵՐՔՈՒՄ

Համաձայն Ս. Աթոռոյ Ցնօրեն Ժողովոյ վերջին նիստին մէջ կայացուած ոռուման, պարականութիւն ունիթէն ի պատօնութիւն եւ երազարական յայտարարելու բէ Ս. Աթոռոյ անուան եւ վարկին դէմ քօնամական ոգուով գրաւած բռուցիկը, որուն անդրադարձած եին վերջերա Սիւրբոյ ԱԶԴՒԱԾ եւ Կ. Պոլոյ ԱԶԴԱՐԱԾ բերերը, բացարձակ սուրբիւն եւ անհերեր գրպահուրիւն միշտն կը պարունակի:

«Երեք երիտասարդ՝ Վարդապետներ» անանուն տարազը, որ իբրև սորուազութիւն դրաւած է այդ գրաւածին ներեւու կերծիքի բողոքին: Մեր Միաբաներեն ո՞չ մին պիտի զիշանեւ դիմել բողոքի այդպիսի սոյս կերպի մը: Այս դիմակին տակ կը ծածկուին Երևան սակամի կայացած կայացած պարագաներու տակ կը ծածկուին անձեռ, որոնք դառնացած են Վանենի դէմ, զինաւորաց որովհետեւ չեն կրցած զոր ունենալ երեւ տարիներ ի վեր սկսուած եւ միջնեւ այսոյ տարուակալուով շինուածական ձեռնարկութեանց մէջ, ուր կ'երազէին գտնել իւնենց համար տանու առաս աղբիւթենք. այս պատճառաւ պարզապէս ահափոռն կը կատարեն, ստիպելու համար Վանական Վաշչութիւնը՝ ուշադրութիւն դարձնել իւնեն:

Անոնք այդ զրպարազիցը երկու տարի ի վեր կը դիմեն նոս Բարձր Գոմիսերութեան եւ Պարտասինն զուրա ազգային ամեն ըրջանակի եւ կարեւու անհամերեւու. բայց ո՞չ կառավարութիւնը եւ ո՞չ ուրիշներ արժէք չեն տուած երեւ անոր եւ չեն բնաւ զրպան անով: Ս. Աթոռոյ Վաշչութեան՝ ոչ մէկ տեղի այս առքի դիմուուրիւն եւ նոյն իսկ հացում չէ հասած:

Պայով բռուցիկը պարուակութեան, իր ամբողջութեանը մէջ, այսինքն իր բոլոր մասերով, սահմանուրիւն եւ ան:

Կ'ըս բէ Վանենի մեծագումար պարտի բնաւ չէ նուազած. մինչդեռ նմանաւութիւնը այս է որ պարտի ուուր 100,000 Սրերինի զումարը վերջին երկու տարուան մէջ 93,000ի է իշխած. եւ նոյն տան կառուցուած են իր 54,000 Սրերին արժած խոռու տէներ, որոնց վարձերը պիտի յաշացուին միմիամ այդ պարտերու ժրջումը աւելի փուրացնելու:

Կ'ըս բէ Վանենի ներեւն մատակարարեան մէջ կեղծումներ կը պատճին միտ. զգացարութիւն մին է այս եւս. մեր բոլոր զործեր եւ հաօթւեներ խիս հակակեփի տակ են չորս տարիներ ի վեր մանաւանդ. Ցնօրեն Ժողովը իր կանոնաւոր հսկողութեան հեռարկած է զանոնէ, եւ առու արդիւնն է միայն ու մեր Պիտինն ամեն տարի կ'ունենայ համասարակուուած վիճակ, ու ենթմասական եւ մատակարարական տեղեկագիրները կը վաւերացուին Միաբանական Լեզիանուր Ժողովին:

Կ'ըս բէ Գանձարաւածի առարկաները կը վաճառուին, եւալին. դարձեալ սուս: Հանգիւական արժէք ներկայացնուու իւերու վաճառումը կ'արգիի ո՞չ միշտ Վանենի Կանոնը եւ

աւանդուրիւնք, այլ նաև Կառավարական օրենքը: Այդպիսի բան չէ պատճառած երբեք: Ասկէց առաջ Միաբանական Ընդհանուր Ժողովակ որոշուած էր ծախու համել միայն հանգույցեալ Միաբաններու անձնական իրերը, ժամացոյց, եւլյան, ինչպէս եւ նախապէտ զնուած ոսկեղին առարկայ մը, որոնք ո՞չ արուեստի եւ ո՞չ հնագիտական տեսակինու մեծ արժեք չեն ներկայացնեւ: Բայց այդ որոշումն ալ գրեթէ չէ գործադրուած, պերաննի վերաբերեալ իրեղինաց զնունքներուն անկաման պատճառաւ:

Խօսէր չեմ ուզեր ընել հայոցալից այս վերագրումներուն, որոնցմայ քրուցիկին հեղինակները անխտօրքն կը պարաւեն Վանական Վաշչուրեան ամենն յարգելի դեմքերն ու պատօնեանները, ինչպէս եւ իրենց անգնամատելի անձնութիւրութեամբ Ս. Արքույս քահականին ծառայութիւն մասուցած երկու աշխարհական ազիմի անձնաւորութիւններ, որոնց յարգանի միամբ կը պարտիկ ապօպին:

Միայն այս արտադրութեանց ձևուն ու ոգին արդէն պիտի կարենար հասկցելի քէ ի՞նչ-պիսի նկարագրի տեր մարդիկ կը բաշխն չսորուագրուած արդ զրաբարագրին մորքին մէջ, եւ քէ լրացրական ուղղամտութեան համաձա՞յն եր զբայիլ անով եւ խճագրական բնդյանամեռու նիւթ հանել անկի:

Հաստառիքնամս Եներին կեամբին հարազաս պատկերը, իր կրօնական, իմացական, մատակարարական, շինուածական եւայլի զիթեռն վայ կազմուած, այն է միայն՝ զոր Նորին Ամենապատութիւն Մրգազան Պատրիարք Հայրը ամէն տարի տնեսական վերամուտի առջի Կ'արտասանեն Միքանանական Ընդհանուր Փողովոյ առջեւ, եւ որ յեսոյ միւս կը հրատակուի «Սի՛ն» Պատօմաքերիին մէջ:

Կը փափաթիմք ու մեր Սիրելի եւ Պատուաժան Ժողովուրդը չի աւատայ առկեց աւարքեր և եղեկութեանց, եւ չառուի մանաւանդ քենամական ոգւով սարաձայնուած լուրերէ:

Ի ԳԻՄԱՅ ՏՆՈՐԵՆ ԺՈՂՈՎՈՅ

ՎԱՐՆ ԱՏԵՆԱՊԻՇԻ

ՊԱՏՐԻԱՐՔԻԿԱՆ ՓՈԽԱՆՈՐԴ

ԱՏԵՆԱԴՊԻ

ՄԱՅԼԻ ՎՐԱ. ԱԲՐՈՀՈՄԵԱՆ ՄԿՐԵԶ ԵՊՈ. ԱԴԱԽԵԱՆ

14 Օգոստոս 1935

Ա. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԵՆ

ԱՎՍՈՐԵԱՑ ՀՈՒՐԵՐ

Աղեակա Օգոստոս ամսուան ընթացքին, Ա. Ա-
թոռոյ Տեօրէն Ժազովը տասը անզամներ ի
Նիստ գումարուեցա իշխան Վարչապահ Մարմին,
Կոստ. Գեր. Խանանք Երեք անգամ, իսկ ինչ
Խորհուրդը մէկ անգամ, իշխանները զրագե-
լութեան մէկ անգամ, իշխանները զրագե-

❶ Եւ. 1 Օգոստ: - Ցրանչիսկեան Միաբանութեան առաջաւորներէն չ. Պօկուրորը, վրապահիք մը Ընկերակցութեանը, յանուն իրենց Մեծաւորին այցելեց. Ս. Գարդիաբեք Հօր, Ս. Յանուարին Տաճարի վերաբերեալ Խարցի մը մասնաւոր պահպանութեան մը մասմար:

• Արև. Եր. Կիր. 2-4 Օդաստ. — Վարդակավառի տօնամիմրութեան և այդ առթիւ կատարուած ձեռնադրութեան վերաբերութեամբ տեսնել, «Սիրոն» այս թիւին էջ 288ի գրաւելինը:

• **β.** 5 Θρασος. — Β. Θωμαριαγκ Μαντονεζ-
πελεγων. Β. Φρεζίζι Τανιθή ρωσοθέων αιγαλανίδης
επιστητού. Ένθωσε Κωνσταντίνεγων Λαράνδιαν θρασ-
πωμαριθρωγων, δημοριανής ή ιωνωμαριακων τη-
ρεργαδιανών φυλαρεβανών έξι.

● №2. 7 Октябрь. — 8. նորայր վրդ. մեկնեցաւ Հալէպի. ճնազաց մօս' արձակուրդի. 8. Տիրան վրդ. Նազարէթ, ժառանդաւորաց արձակուրդի տեղ գնառելու:

— 8. Տիրան վրդ. և ժառանգաւորք մեկնեալ նախակենս!

● Եր. 10 Ոգոսու. — Տ. Պարսյը Արեհայ, բնկերակցութեամբ Անդրանիկ Սարգսաւագի Անդրյագուանան մեկնեցաւ, Ամմանի և Բետէքայի առաջաման հոգեառ աւսկաւթեամբ:

— Հօգեբարձ Տ. Խոյիք պատրիարքի գամբա-
րանի սնարին զերեկ որդին մէջ ագուցուեցա-
այսօք յախճապահէայ հայկական մեծ խաչ-
զարդ մը, նման անօք որ ասկէց առաջ ագու-
ցան էր Հոգեբարձ Տ. Խոյիք պատրիարքի գամ-
բարանի վերին:

● Կիր. 11 Օգոստ. — Ա. Պատարագն ի Ս. Յարոշին Քարոզեց Տիրայր Վրդ. բնարանն էր մեատիք առ Տէր և առէք զլրա, և երեսք ձեր մի ամաչեցին (Սարմ. 1, Գ. 5), բողհ. իմաստն էր հետեւելը, երկու տեսակ լոյս կայ, նիւթական եւ հոգելոր, մին բնութիւնը սիսանելի կ'ընէ մեր մարդաւոր աշքերուն, միւսով կը թափանցենք մեր ներքին կենաքի խորութեանց մէջ հակնառն համար անոր գտանիթք, այսինքն մեր գոյութեան խորութքը: Վերջին այդ լոյսին պայման է Քրիստոնէական կրօնի գոցացմը որ անմահութեան հաւատաքի մէջն էր պայծառացնէ ներքին մարդը Քրիստոնէական լոյսին արտաքյա տպուած կենաքը խաւարային է ու ննպատակ: Գէտք է Տիրայր այդ լոյսին զուր չըլլաւառ համար ոչնչութեան մութին:

● ԲՀ. 12 Օգոստ. — Կէտ օրե գիրջ. Ս. Պատարագը Հայրը Պարոն-Տէրի հոգոցին մէջ մէշ մէշապանի պատիւ մընճակց ամերիկան ընդհ. հրապարախ, երկու հրապարաններուն եւ փոխ հրապարախն Միախան էին Տ. Ավելին. Տ. Սերովէք և Տ. Շաւարչ վարդապետներ:

— Տ. Գարեգին Վրդ. Հայֆայէն հասաւ:

● ԴՀ. 13 Օգոստ. — Ս. Պատարագըք, ընկերակցութեամբ Տ. Սերովը Արքապահն է Տ. Պարոյ Վարդապետի, այցելեց Գրունքուկեան վասքի տպարանը, երկաթագործարանը, կահագործարանը, բահանացը, սիկանատունը, շտեմարանը, մասանը, աղօրիթը, գաղափոր մը կազմելու համար մատակարարական ներքին կարգուկաննին մասին:

● ԴՀ. 14 Օգոստ. — Աւուցիչ Պ. Շահան Գէրպէրեան արձակուրդով մէկնեցաւ եղագակուս և հաւատար նաև Գուշակիտ: — Տ. Տիրան Վրդ. եկաւ նազարէթէն:

● Եշ. 15 Օգոստ. — Տ. Զքոն Վրդ. մէկնեցաւ նազարէթ. անէկ պատիւ անցնի իրանան, ողափոխութեան համար:

● Ուր. 16 Օգոստ. — Տ. Տիրան Վրդ. առամեայ անչիւ պաշտոնով մէկնեցաւ Հայֆա:

— Անկիթքան ներկուպոս Անդրիս մէկնութիւն առթիւ այցելեց Ս. Պատարագը Հօր:

● Կիր. 18 Օգոստ. — Մայր Տաճարին մէջ քարոզեց Հ. Ասողիկ, օրուան Աւետարանէն ընարան առնելով օթովեալ լիցին քիզ մեղք քոյ, բացարել ջանա մի ընդհանրատէս ամէն վիշտիքական ներքութիւն մը կը ժածնուի իրեր պատճառ: յանախ ենթակայէն և երբեմն ուրիշներէն դործուած:

— Ս. Պատարագէն վերջ կատարուեցաւ խաղողի օրնութիւն:

● ԲՀ. 19 Օգոստ. — Տէր նզիլէ վրդ. մէկնեցաւ, իրա առամարար փոխ տեսուէ ժառանգաւոց, ի տերի Տ. Զքոն գարգապետի, որ այսոր կը մէկնի նազարէթ:

● ԴՀ. 20 Օգոստ. — Կանոնիկոս Պրիմէէն եւ գէրութիւն կրն. գարգարանի ուսուցիչներէն Պ. Միքայիլէտ և իր տիկինը այցելեցին Ս. Պատարագը Հօր:

● Ուր. 23 Օգոստ. — Տ. Գարեգին Վրդ. գարձաւ Հայֆայէ:

● Եր. 24 Օգոստ. — Տ. Շաւարչ Վրդ. Յուղէ

մէկնեցաւ Վերափոխման տօնին առթիւ պատարագիւու և քարոզելուու Վաղուան Վերափոխման տօնին առթիւ, գարձան նազարէթէն արձակուրդի գացած ժառանգաւորներ, առաջնորդութեամբ Տ. Եղիշէ վարդապետին:

— Ս. Պատրիարք Հօր Նախագահութեամբ, երեկոյին, ամբողջ Միարանութիւնը իրեն սեւանի, Ա. Կուսին գիրշզմանը մուտք գործեց Արաշավագութափականի:

● Կիր. 25 Օգոստ. — Ասուուածամօր գիրղմանին վրայ Ս. Պատարագ մատոյց Տ. Միքայիլ Սրբանուն Աղաւունունի, և քարոզեց, պանծացնելով Ս. Կուսին անձին վրայ միապար մօր ասուածային պատկերը: Սաստիի տաքէն եւ ճնշուած օդին պատառուաւ, Սրբազնն գիրիքական նեղութիւն զգալով՝ երախայից պատարագին սարատեմէն ետքը, Տ. Ասողիկ վրդ. շարունակից Ս. Պատարագը:

— Հայֆայի հայ երիտասարցներու նուագախումը Ո. Պատարագէն առաջ և ետքը աղային կարուներ նուագեց Գեթենսեմանիի մեր սեփական պարտէցին մէջ:

● ԲՀ. 26 Օգոստ. — Վերափոխման Միեւելոցի տօնին առթիւ Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Փրկիչ, ուր Տ. Կիւրեղ Վրդ. քարոզեց Եթեալու Քրիստոնական վասն կանելու մէջ անմահութեան, որ ճշմարիտ կեանքն է, բնազդը միայն ունէին հիմ կրօնները. Աւետարանն է որ այդ զգացումը վերածեց պայծառ հաւատաքի, զայն ընկելով քրիստոնէական հաւատաքի ամենէն կարիսը սկզբունքներէն մին:

— Տ. Եղիշէ վրդ. ժառանգաւուր արեկորդ խումբը առաջնորդից գէտի նազարէթ:

● ԴՀ. 27 Օգոստ. — Տ. Սիրիկ Վրդ. մէկնեցաւ Արէնք, Լութքաքի մէջ ջրառածանք ընելու համար: — Տ. Շաւարչ Վրդ. կարգուեցաւ կոգի որ հոգի Հայֆայի հայ գաղութիւնն Աւգաթ Թարգման Տ. Հայրիկ Վրդ. ի յանձնուեցաւ նաև Ծպարանի ծնուշութիւնը:

● ԴՀ. 28 Օգոստ. — Հ. Սերովիք մէկնեցաւ նազարէթ, պատամարար հակելու համար ժառանգաւուր սաներու վրայ, ի տեղի Տ. Եղիշէ Վրդ. իր պատի վիրապանայ:

● Եշ. 29 Օգոստ. — Նորմնածայ Տ. Ենորիք արեգայ իր անդրանիկ Ս. Պատարագը մատոյց Մայր Տաճարին մէջ:

— Տ. Գարեգին Վրդ. մէկնեցաւ Հալէպ:

● Ուր. 30 Օգոստ. — Նորմնածայ Տ. Արթուն արելայ մատոյց իր անդրանիկ Ս. Պատարագը Մայր Տաճարին մէջ:

ԱՌ ԱՐ ԱՆԿ Է

Առ Բազմավիայ պատասխանը Տ. Տիրան Վարդապետի պիտի հերատարակուի «Սիօն»ի յաջորդ թիւին մէջ, Ներկայ թիւը տպագրուած եւ եր սացանէ այդ պատասխանը Հայֆայէ, ուր պատօնի նոն զբաղութեանով առժամապէս կը գնուի զայն գրողը: